

# ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

### ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

#### ԲԱԺԻՆ 1

#### ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

**Հոդված 1.** Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (զանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման (բացի Հայաստանի Հանրապետությունից), *Արցախի*<sup>26)</sup> Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև *աշխատանքների կատարման* և<sup>35)</sup> ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

**Հոդված 2.** ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ծեռնարկատիրական) գործունեություն վարող և սույն օրենքի 6 հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ծեռնարկությունները (այսուհետ՝ անձինք), *բացառությամբ սույն հոդվածով և սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքերի*<sup>15)</sup>:

Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:

*Արցախի*<sup>26)</sup> Հանրապետության և օտարերկրյա այն քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ ֆիզիկական անձինք), ովքեր գործատուների հետ կնքած պայմանագրերի համաձայն հանդիսանում են վարձու աշխատողներ և միաժամանակ չեն իրականացնում սույն օրենքի 6-րդ հոդվածով<sup>35)</sup> սահմանված գործարքներ (գործառնություններ)՝ ԱԱՀ վճարող չեն հանդիսանում:

*Անհատ ծեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից*<sup>2)</sup> օրենքով և *Արցախի*<sup>26)</sup> Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով զանձվում է ԱԱՀ *Արցախի*<sup>26)</sup> Հանրապետության տարածք ապրանքներ ներմուծելիս, եթե նրանց կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում է օրենքով սահմանված չափերը:<sup>11)</sup>

*Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը* դրվում է այլ անձանց վրա կամ սահմանվում է համապարտ պարտավորություն՝ հարկային պարտավորությունների կատարման մասով:<sup>15)</sup>

**Հոդված 3.** *Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործարքներ իրականացրած իրավաբանական անձինք և անհատ ծեռնարկատերերը համարվում են ԱԱՀ վճարող՝*

- եթե նրանք օրենքի համաձայն չեն համարվում առևտրի հարկ վճարողներ (ներառյալ՝ այն դեպքերում, երբ անձինք չեն կարող, կամ դադարում են համարվել այդպիսիք),

- այն գործարքների (գործունեության) մասով, որոնք ենթակա չեն առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկման:

Սույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում անհատ ծեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ընթացիկ տարում կրում են ԱԱՀ-ի վճարման պարտավորություն, եթե՝

1) սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության<sup>35)</sup> «ա» ենթակետով սահմանված՝ արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 40 000 000 ՀՀ դրամը (ԱԱՀ-ի շեմ)։

2) սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության<sup>35)</sup> «ա» ենթակետով սահմանված գործարքներից, բացառությամբ արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում

անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքների, և սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով<sup>35)</sup> սահմանված գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 12 000 000 ՀՀ դրամը (ԱԱՀ-ի շեն):

Սույն մասով սահմանված ԱԱՀ-ի շեները չեն տարածվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության<sup>35)</sup> «բ» և «գ» ենթակետերի համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար որոշվող հարկվող շրջանառության մասով:<sup>\*1), \*15), \*22), \*24)</sup>

Երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ և իններորդ պարբերություններն ուժը կորցրած են ճանաչվել<sup>\*15), \*19), \*22)</sup>

Սույն օրենքի իմաստով՝ հասույթ է համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող անձանց տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեության ընդհանուր արդյունքը՝ առանց կատարված ծախսերի (այդ թվում՝ ապրանքների ձեռքբերման գծով ծախսերի) պակասեցման: Առևտրի ոլորտում այն հավասարեցվում է ապրանքաշրջանառությանը:<sup>\*4), \*7)</sup>

**Հոդված 4.** (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>\*7)</sup>

## ԲԱԺԻՆ II

### ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ՀԱՐԿՎՈՂ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

**Հոդված 5.** ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում *Արցախի*<sup>26)</sup> Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող սույն օրենքի 6 հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

**Հոդված 6.** ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

1/ *ապրանքի մատակարարումը՝ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց: Սույն կետի կիրառության իմաստով՝ ապրանքի մատակարարում է համարվում նաև*

ա) *խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքի օտարումը,*

բ) *գրավատուի կողմից գրավառուին կամ գրավառուի նշած անձին ապրանքի (գրավի առարկայի) նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը,*

գ) *վարձատուի կողմից լիզինգի առարկայի հանձնումը վարձակալին, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ այդ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին:<sup>\*35)</sup>*

Սույն կետի կիրառության իմաստով՝ *ապրանքի մատակարարումը համարվում է ԱԱՀ-ով հարկվող գործարք (գործառնություն), եթե ապրանքի մատակարարման վայրը, սույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, համարվում է Արցախի Հանրապետությունը:<sup>\*35)</sup>*

Ապրանքի մատակարարում չի համարվում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողական նպատակներով օգտագործման ենթակա)՝ անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույքի (այդ թվում՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, անձնական օգտագործման ավտոմեքենայի) և ֆիզիկական անձանց կողմից գույքային իրավունքների օտարման տնտեսական գործունեություն համարվող գործարքը, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացրած գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում.

ա. *ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը.*

բ. *մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում.*

գ. օրենքով սահմանված կարգով որպես բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր հանդիսացող անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների, անհատական բնակելի տների օտարումը (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) համարվում է ապրանքի մատակարարում, բացառությամբ՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների ընդհանուր մակերեսի մինչև տասը տոկոսի, սակայն ոչ ավելի, քան 500 քառակուսի մետր մակերեսի, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ մինչև չորս անհատական բնակելի տների օտարումը:

դ. իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ֆիզիկական անձի կողմից շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) ներդրումը, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը օտարվել է այլ անձի:<sup>26)</sup>

Անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց համար սույն կետում նշված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ի պարզեցված հաշվարկների ներկայացման և գումարների վճարման կարգն ու ժամկետները սահմանում է Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարությունը: Սույն կետը, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ, եթե սույն կետում և սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված գույքը չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող (իրականացված) ձեռնարկատիրական գործունեության առարկա:<sup>27)</sup>

Անկախ սույն կետի դրույթներից՝ ֆիզիկական անձանց պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը, ինչպես նաև նվիրատվության ձևով գույքի օտարումը մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց միջև ապրանքի մատակարարում չի համարվում:<sup>15), \*20), \*22)</sup>

2/ աշխատանքի կատարումը՝ աշխատանքի կատարման արդյունքի սեփականության իրավունքի փոխանցում մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց:

3/ ծառայության մատուցումը՝ մեկ անձի կողմից մեկ այլ անձի օգտին գործողության իրականացում՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի): Սույն կետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցում է համարվում նաև՝

ա) ապրանքի՝ վարձակալության կամ օգտագործման տրամադրումը, ինչպես նաև գույքի՝ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրամադրումը՝ տոկոսի գումարների մասով,

բ) փոխառության տրամադրումը,

գ) ոչ նյութական ակտիվի օտարումը,

դ) ոչ նյութական ակտիվի օգտագործման տրամադրումը:

4/ «բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Արցախի Հանրապետություն ապրանքի ներմուծումը:<sup>35)</sup>

\*2) \*26)

Ուժը կորցրած է ճանաչվել <sup>22), \*35)</sup>

Բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցման գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում, եթե այն սկսվում և ավարտվում է Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) տարածքից դուրս: Սույն պարբերության կիրառության իմաստով՝ տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ իրավաբանական անձանց և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) տարածքից դուրս սկսվող և Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) տարածքից դուրս ավարտվող բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը:<sup>35)</sup>

### Հոդված 6.1.

1. Ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձանց կողմից ԱՏԳԱԱ 841 920000, 841 990150, 8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8426, 8429, 8430, 8435, 8441, 84431, 8452 (բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 8478, 8479, 85023100 կամ 870410 ծածկագրերին դասվող ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկած ավելացված արժեքի հարկի գումարների պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

1) հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70 մլն դրամից,

2) հայտարարագրման օրվանից երկու տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70 մլն դրամ և ավելի,

3) հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է 300 մլն դրամը:

Ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից ԱՏԳԱԱ 250510, 250900, 251 820, 2836, 3901, 3902, 3903, 3904, 3905, 3906 ծածկագրերին դասվող ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով:

Սույն մասով սահմանված ծածկագրերին դասվող ապրանքների մասով ներմուծման ժամանակ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կարող է չհետաձգվել՝ մաքսային մարմիններին ներկայացված հարկ վճարողի գրավոր հայտարարությամբ:

Սույն մասին համապատասխան հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե մինչև ժամկետի լրանալու օրը:<sup>24)</sup>

Սույն մասում նշված հետաձգումը դադարեցվում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքում:

2. Մինչև սույն հոդվածի առաջին մասով սահմանված հետաձգման ժամկետի լրանալը սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը դադարեցվում է (ԱԱՀ-ի վճարման պարտավորությունն առաջանում է) մաքսային մարմիններին ներկայացված՝ հարկ վճարողի գրավոր հայտարարությամբ՝ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրը, և հայտարարությունում նշված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վճարման պետական բյուջե ժամկետի հետաձգումը դադարեցնելու օրվանից տասնօրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկումը և այդ գումարների նկատմամբ հսկողությունն իրականացնում է մաքսային մարմինը: Մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և սահմանված ժամկետում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:<sup>22), 24)</sup>

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարներն արտացոլվում են պարտավորության առաջացման հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում՝ որպես ներմուծված ապրանքների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ պարտավորության գումարներ, որոնք, սակայն, հաշվետու ժամանակաշրջանում Արցախի<sup>26)</sup> Հանրապետության տարածքում իրականացրած<sup>22)</sup> ԱԱՀ-ով հարկվող գործարքների համար ԱԱՀ-ի պարտավորության ընդհանուր գումարի հաշվարկմանը չեն մասնակցում:

ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացվում է անկախ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման պարտավորությունն առաջանալու պահին հետաձգման արտոնությունից օգտված անձի ԱԱՀ վճարող համարվելու կամ չհամարվելու հանգամանքից:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված գումարները ԱԱՀ վճարող համարվող անձանց կողմից հաշվանցվում են, դրանց մարման հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, որպես ներմուծված ապրանքների համար վճարված գումարներ՝ օրենքով սահմանված դեպքերում, կարգով և չափերով:<sup>19), 20)</sup>

#### **Հոդված 7. ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)**

1/ պետական տուրքի գումարը:<sup>2)</sup>

2) Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա՝ հարկ վճարողների կողմից՝

ա) ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման<sup>35)</sup> և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները,

բ) մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության և ստացված հատուցման տարբերությունը:<sup>3)</sup>

3. հրապարակային պայմանագրերով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում իրացված ապրանքների իրացնողի կողմից անհատույց մատուցվող սպասարկման ծառայությունները, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց կոմպլեկտավորող տարրերի անհատույց փոխարինումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքում:<sup>2)</sup>

4) իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում անձին պատկանող բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի՝ այլ անձի օտարումը, ինչպես նաև ապապետականացման գործարքները:<sup>22), 26)</sup>

5/ իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության՝ օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման<sup>2)</sup> գործարքները:

6/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*22)</sup>

7/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

8/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

9/ բռնազրավման կամ նվիրատվության ձևով գույքի կամ գույքային իրավունքի օտարումը պետությանը, ինչպես նաև հողամասից կամովին հրաժարվելու դեպքում քաղաքացու կամ իրավաբանական անձի հողամասը որպես համայնքային սեփականություն՝ համայնքին, կամ որպես պետական սեփականություն՝ պետությանը փոխանցելու գործարքները <sup>\*22)</sup> <sup>\*2)</sup>

9.1) հողամասի, այլ անշարժ գույքի փոխանակության գործարքները, երբ գործարքի կողմ է հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը. <sup>\*22)</sup>

9.2) պետության կամ համայնքի կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը. <sup>\*26)</sup>

10) տիրազուրկ, ժառանգության իրավունքով պետությանն անցած արժեքների, զանձերի իրացման շրջանառությունը, ինչպես նաև սուբսիդիաների, սուբվենցիաների, դրամաշնորհների կամ այլ ձևով այնպիսի գումարների ստացումը, որոնց դիմաց այդ գումարները ստացողների մոտ, ըստ էության, ապրանքներ մատակարարելու, աշխատանքներ կատարելու <sup>\*35)</sup> կամ ծառայություններ մատուցելու պարտավորություն չի առաջանում. <sup>\*7), \*22)</sup>

11/ Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետության բյուջետային հիմնարկների կողմից ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը <sup>\*35)</sup> և ծառայությունների մատուցումն այն մասով, որից հասույթն ամբողջությամբ հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին.

12/ ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը.

13/ Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետություն մշտական բնակության մեկնող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը.

14/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

15) օտարերկրյա պետություններում գործող Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների և Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետության դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների կողմից՝ ծառայության ավարտից հետո իրենց անձնական գույքի ներմուծումը.

16) Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետության տարածքից «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով <sup>\*35)</sup> (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ընթացակարգով <sup>\*35)</sup> ներմուծված ապրանքների նկատմամբ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի <sup>\*35)</sup> կիրառման դեպքերի) ապրանքների արտահանման գործարքները. <sup>\*19)</sup>

#### **Հոդված 8.** ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով՝

1/ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման <sup>\*35)</sup> և ծառայությունների մատուցման դեպքերում (բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի) <sup>\*14)</sup> ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում: Տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ՝ անկախ ապրանքի մատակարարման պայմանագրով տարայի վերադարձ նախատեսված լինելու հանգամանքից. <sup>\*2), \*3), \*26)</sup>

2/ Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետություն ներմուծվող ապրանքների (բացառությամբ ծխախոտի արտադրանքի) <sup>\*29)</sup> համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի <sup>\*2)</sup> գումարը.

3/ ԱԱՀ վճարող անձանց կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման կամ նորոգման նպատակով Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետության ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց վերամշակման կամ նորոգման արժեքը, որը որպես հատուցում պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին կամ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրյա ֆիզիկական անձանց), իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը.

4/ սահմանված կարգով Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ այդ անձանց սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ կոնտրագենտ) հանդիսացող Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետության անձինք (քաղաքացիները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման և պետական մարմինները) այդ գործարքների գծով

օտարերկրյա անձանց փոխարեն կրում են հարկային պարտավորություն՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով:<sup>2)</sup>

Սույն կետով սահմանված դեպքում պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող Արցախի Հանրապետության անձն ազատվում է ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունից, եթե ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է Արցախի Հանրապետության անձի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից:<sup>26)</sup>

5) հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա հանձնակատարի կամ գործակալի կողմից մատուցվող ծառայությունների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում համապատասխանաբար՝ հանձնակատարին, գործակալին հասանելիք գումարը (վարձատրության և հանձնակատարի կամ գործակալի կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց որպես փոխհատուցում վճարվող գումարը (առանց ԱԱՀ-ի), իսկ հանձնարարողի, պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում հանձնարարության կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի<sup>35)</sup> կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ԱԱՀ-ի):

Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում (բացառությամբ՝ սույն կետով նախատեսված դեպքի)՝ կոմիսիոների կամ գործակալի մոտ ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի<sup>35)</sup> կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ԱԱՀ-ի), իսկ կոմիտենտի կամ պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում կոմիսիայի<sup>22)</sup> կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ կատարված աշխատանքի<sup>35)</sup> կամ մատուցված ծառայության արժեքի (առանց ԱԱՀ-ի) և համապատասխանաբար՝ կոմիսիոներին կամ գործակալին հասանելիք գումարի (առանց ԱԱՀ-ի) տարբերությունը:

Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրով ապրանքների մատակարարման կամ աշխատանքների կատարման<sup>35)</sup> կամ ծառայությունների մատուցման դեպքում, երբ իրականացվող գործարքը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման, այդ թվում՝ այն դեպքերում, երբ ֆիզիկական անձի գույքի օտարման գործարքը ապրանքի մատակարարում չի համարվում<sup>22)</sup>, կոմիսիոների կամ գործակալի մոտ ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում համապատասխանաբար՝ կոմիսիոների կամ գործակալի վարձատրության գումարը (առանց ԱԱՀ-ի):

6) ապրանքների անհատույց մատակարարման, աշխատանքների անհատույց կատարման կամ<sup>35)</sup> ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ սույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը:<sup>2), \*3), \*20)</sup>

7) փոխանակման գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքների մատակարարման կամ աշխատանքների կատարման<sup>35)</sup> կամ ծառայությունների մատուցման համար սույն օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով այդ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման<sup>35)</sup> ու ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը՝ առանց ԱԱՀ-ի:

8) ակցիզային հարկով հարկվող ապրանքների (բացառությամբ ծխախոտի արտադրանքի)<sup>29)</sup> մատակարարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ ներառվում է նաև ակցիզային հարկի գումարը:

9) եթե Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ապրանքատեսակների մատակարարման գործարքների մասով մատակարարված ապրանքի դիմաց հատուցման ենթակա գումարը կնքված պայմանագրի համաձայն ենթակա է ճշտման՝ ճշգրտվող տվյալների (ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա, ապրանքն ստանալուց կամ դրա վերամշակումն ավարտելուց հետո, ապա մատակարարված ապրանքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է օտարերկրյա բորսայի կամ հանդեսի կողմից հրապարակվող տվյալներով որոշվող՝ ապրանքի միավորի հաշվարկային գնի և տվյալ ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսվող ճշգրտվող տվյալների (մասնավորապես՝ ապրանքի վերջնական քանակի, որակական

հատկանիշների) հիման վրա (անկախ վերջնահաշվարկի արդյունքում վճարման ենթակա հատուցման գումարից):

Սույն կետի կիրառման առումով՝

ա. հարկվող շրջանառության որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, դրանց ճշգրտման առավելագույն սահմանները, ինչպես նաև ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը (ներառյալ՝ հաշվարկային գնի որոշման պարբերականությունը) սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

բ. ապրանքի մատակարարման գործարքների դեպքում ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարի (առանց ԱԱՀ-ի) ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում՝ որպես ԱԱՀ-ով հարկվող շրջանառության ավելացում կամ պակասեցում:<sup>\*14), \*26)</sup>

10) Արցախի Հանրապետության տարածքում գտնվող<sup>\*35)</sup> շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի) չափով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարման դեպքում՝ սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով<sup>\*35)</sup>, բացառությամբ սույն կետով սահմանված դեպքի: Սույն պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե սույն պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):<sup>\*26)</sup>

Չերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարվող (օտարված) սեփականության դիմաց սեփականատիրոջը՝ կառուցված բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարաններով կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ բնակելի տներով հատուցելու դեպքում, ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին»<sup>\*35)</sup> օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով որոշվող արժեքը:

Երրորդ պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել<sup>\*15), \*26)</sup>

10.1) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի), իսկ դրա բացակայության դեպքում՝ գույքահարկով և հողի հարկով հարկման տվյալ օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի տեսակարար կշիռն համապատասխանող հարկման բազայի (հարկվող օբյեկտի) հինգ տոկոսի չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունը, ըստ ԱԱՀ-ի ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների, բաշխվում է հավասարաչափ:

ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ որոշված հարկվող շրջանառության և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի՝ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշիռն արտադրյալ:

Սույն կետի դրույթները չեն կիրառվում, եթե սույն կետով սահմանված գույքային միավորների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):<sup>\*26)</sup>

11) արտարժույթի առուվաճառքի գործունեության մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը:<sup>\*22)</sup>

12) եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը<sup>\*35)</sup> լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա՝ լիզինգի առարկայի արժեքի համապատասխան գումարի չափը և հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրով ստացման

ենթակա տոկոսի գումարները<sup>\*35)</sup>, իսկ եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը<sup>\*35)</sup> լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում ֆինանսական վարձակալությունից ստացման ենթակա տոկոսագումարը<sup>\*26)</sup>

13) ծխախոտի արտադրանքի ներմուծման և (կամ) մատակարարման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում ծխախոտի արտադրանքի տուփի վրա Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի<sup>\*29)</sup>

### ԲԱԺԻՆ III

#### ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

**Հոդված 9.** ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս ապրանքների, աշխատանքների<sup>\*35)</sup> ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

Ապրանքների, աշխատանքների<sup>\*35)</sup> ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով, եթե՝

1) ԱԱՀ վճարողը սույն օրենքի պահանջների խախտմամբ, իրեն չի համարել ԱԱՀ վճարող:

2) ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ համարվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում առանձին տողով չի նշել ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը:

3) ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ համարվող գործարքների գծով հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել:<sup>\*26)</sup>

3-րդ պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել<sup>\*22), \*26)</sup>

**Հոդված 10.** ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ է սահմանվում սույն օրենքի 16 հոդվածում նշված ապրանքների, աշխատանքների<sup>\*35)</sup> և ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

**Հոդված 11.** ԱԱՀ առանձին վճարողների, նրանց խմբերի, գործարքների և գործառնությունների առանձին տեսակների համար օրենքով կարող են սահմանվել ԱԱՀ-ին փոխարինող հարկեր կամ վճարներ<sup>\*22)</sup>:

### ԲԱԺԻՆ IV

#### ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ<sup>\*35)</sup> ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՅՐԸ

**Հոդված 12.** Ապրանքների մատակարարման վայր է համարվում ապրանքների գտնվելու տեղը, որտեղից դրանք փաստացի մատակարարվում են: Ապրանքները համարվում են մատակարարված Արցախի<sup>\*26)</sup> Հանրապետությունում, եթե դրանք՝

ա/ առաքվել կամ հանձնվել են գնորդին (պատվիրատուին) Արցախի<sup>\*26)</sup> Հանրապետության տարածքում:

բ/ արտահանվել են Արցախի<sup>\*26)</sup> Հանրապետությունից:

Ներմուծված ապրանքները համարվում են մատակարարված Արցախի<sup>\*26)</sup> Հանրապետության տարածքում դրանց ներմուծման պահից:

**Հոդված 13.** (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>\*22), \*35)</sup>

**Հոդված 14.**

1. Աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը, եթե՝

1) կատարվող աշխատանքները և (կամ) մատուցվող ծառայություններն անմիջականորեն կապված են Արցախի Հանրապետության տարածքում գտնվող կամ կառուցվող կամ կառուցվելիք անշարժ գույքի հետ: Սույն կետում նշված աշխատանքներին և (կամ) ծառայություններին մասնավորապես վերաբերում են՝

ա) շինարարության նախապատրաստման և իրականացման (ներառյալ՝ հետախուզման,



նախագծման, դիզայնեական, մոնտաժային, հեղինակային ու տեխնիկական վերահսկողության) աշխատանքները և ծառայությունները,

բ) անշարժ գույքի նորոգման, վերականգնման ու կանաչապատման աշխատանքները և ծառայությունները,

գ) անշարժ գույքի առք ու վաճառքի գործակալների ու փորձագետների կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները (ներառյալ՝ անշարժ գույքի գնահատման ծառայությունները),

դ) անշարժ գույքը վարձակալության (այդ թվում՝ լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունները.

2) կատարվող աշխատանքները և (կամ) մատուցվող ծառայություններն անմիջականորեն կապված են Արցախի Հանրապետության տարածքում գտնվող շարժական գույքի (այդ թվում՝ տրանսպորտային միջոցի) հետ, բացառությամբ շարժական գույքի վարձակալության (այդ թվում՝ լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների.

3) մշակույթի, արվեստի, ուսուցման (կրթության), գիտության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, զբոսաշրջության, հանգստի և սպորտի ոլորտի ծառայությունները փաստացի մատուցվում են Արցախի Հանրապետության տարածքում.

4) կազմակերպությունը, որի պետական գրանցման վայրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը, կամ անհատ ձեռնարկատերը, որի պետական հաշվառման վայրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նրա բնակության վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը, կամ ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական ստորաբաժանումը, որի գտնվելու վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը, ընդունում է հետևյալ աշխատանքները կամ ստանում է հետևյալ ծառայությունները (այդ թվում՝ այն դեպքերում, երբ աշխատանքներն ուղղակիորեն ընդունում է կամ ծառայություններն ուղղակիորեն ստանում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, սակայն դրանց օգտագործումը (սպառումը) փաստացի կատարվում է դրանց մշտական ստորաբաժանման կողմից՝

ա) արտոնագրերի, լիցենզիաների, ծանուցումների, թույլտվությունների, առևտրային նշանների, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքների և համանման այլ ծառայություններ,

բ) էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազաների (հաշվիչ տեխնիկայի ծրագրային միջոցների և տեղեկատվական արտադրանքի) ծրագրերի մշակման աշխատանքներ, ծառայություններ, դրանց հարմարեցման ու ձևափոխման ծառայություններ,

գ) խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայնեական, մարկետինգային ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ, ինչպես նաև սույն ենթակետում նշված ծառայություններին համանման այլ ծառայություններ,

դ) անձնակազմի (աշխատակիցների) աշխատանքի տրամադրման ծառայություններ այն դեպքում, երբ անձնակազմն աշխատում է այդ ծառայությունները ստացողի գործունեության վայրում,

ե) շարժական գույքը (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարձակալության (այդ թվում՝ լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունների, որոնց մատուցման վայրը որոշվում է սույն մասի 6-րդ կետով սահմանված կարգով) վարձակալության (այդ թվում՝ լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայություններ,

զ) պատվիրատուի համար սույն կետով սահմանված աշխատանքները կատարող և (կամ) ծառայությունները մատուցող կազմակերպություն և (կամ) անհատ ձեռնարկատեր ներգրավելու գործակալական ծառայություններ.

5) Արցախի Հանրապետությունում մշտական ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից մատուցվում են բեռների և (կամ) ուղևորների փոխադրման այնպիսի տրանսպորտային ծառայություններ, որոնք սկսվում և ավարտվում են Արցախի Հանրապետության տարածքում.

6) աշխատանքը կատարող և (կամ) ծառայությունը մատուցող կազմակերպության պետական գրանցման վայրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը կամ աշխատանքը կատարող և (կամ) ծառայությունը մատուցող անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վայրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նրա բնակության վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը կամ աշխատանքը կատարող և (կամ) ծառայությունը մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական ստորաբաժանման գտնվելու վայրը համարվում է Արցախի Հանրապետությունը, եթե այլ բան սահմանված չէ սույն մասի 1-4-րդ կետերով և սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2. Աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը համարվում է Արցախի

Հանրապետությունից դուրս, եթե՝

1) կազմակերպությունը, որի պետական գրանցման վայրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը չի համարվում Արցախի Հանրապետությունը, կամ անհատ ձեռնարկատերը, որի պետական հաշվառման վայրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նրա բնակության վայրը չի համարվում Արցախի Հանրապետությունը, կամ ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական ստորաբաժանումը, որի գտնվելու վայրը չի համարվում Արցախի Հանրապետությունը, ընդունում կամ ստանում է սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված աշխատանքները կամ ծառայությունները (բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքներն ուղղակիորեն ընդունում է կամ ծառայություններն ուղղակիորեն ստանում է ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, սակայն դրանց օգտագործումը (սպառումը) փաստացի կատարվում է դրանց մշտական ստորաբաժանման կողմից)։

2) աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման վայրը, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, չի համարվում Արցախի Հանրապետությունը։

3. Եթե կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարվում են մի քանի տեսակի աշխատանքներ և (կամ) մատուցվում են մի քանի տեսակի ծառայություններ, և մի տեսակի աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը մյուս տեսակի աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նկատմամբ կրում է օժանդակ բնույթ, ապա օժանդակ աշխատանքների կատարման կամ օժանդակ ծառայությունների մատուցման վայր է ճանաչվում հիմնական աշխատանքների կատարման կամ հիմնական ծառայությունների մատուցման վայրը։<sup>\*35)</sup>

<sup>\*2), \*12), \*22), \*26)</sup>

## ԲԱԺԻՆ V

### ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓՈՎ ՀԱՐԿՈՒՄ

**Հոդված 15.** ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է։ ԱԱՀ-ից ազատվում են սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված հետևյալ գործարքները և գործառնությունները՝

1/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

2) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը։ Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» <sup>\*35)</sup> օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ <sup>\*2), \*10), \*17), \*26)</sup>

3) դպրոցական գրելու և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների կողմից հրատարակվող գիտական, գիտամեթոդական գրականության և դասագրքերի իրացումը։

4) գիտահետազոտական և հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման <sup>\*17)</sup> աշխատանքները։

5/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

6) ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, 0106 41 000, 0106 49 000 <sup>\*35)</sup>, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև <sup>\*26)</sup> գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը <sup>\*8), \*20)</sup>

7) արտադրողի կողմից Արցախի <sup>\*26)</sup> Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (ուժի մեջ է մինչև 2026 թվականի հունվարի 1-ը) <sup>\*8), \*15), \*19), \*23), \*26), \*30)</sup>

8/ նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատությունների, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունները, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը <sup>\*35)</sup>։

9/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*3)</sup>

10/ թերթերի և ամսագրերի իրացումը.

11/ թաղման բյուրոների, գերեզմանատների ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, <sup>\*35)</sup> ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների իրացումը.

12/ կրոնական ծիսակատարությունները, կրոնական կազմակերպություններին մատակարարվող կրոնական պարագաները, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների իրացումը.

13/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

14/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*7)</sup>

15/ ապահովագրական և վերապահովագրման գործառնությունները, ներառյալ՝ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները.

16/ կենսաթոշակային ապահովման գործառնությունները, ներառյալ՝ դրանց հետ կապված միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները.

17/ բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների <sup>\*10), \*20)</sup>, վճարահաշվարկային կազմակերպությունների (բացառապես սույն կետով նախատեսված վճարահաշվարկային ծառայությունների մատով) <sup>\*12)</sup> և վարկային կազմակերպությունների կողմից (բացառությամբ՝ սույն կետով սահմանված դեպքերի) իրականացվող <sup>\*7)</sup> ֆինանսական հետևյալ գործառնությունները և ծառայությունները՝

- ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունումը, բանկային և ինվեստիցիոն հաշիվների բացումը, վարումը ու սպասարկումը, այդ թվում նաև վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը.

- բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կողմից վարկերի (փոխառությունների) տրամադրումը <sup>\*10)</sup>, այդ թվում՝ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորումը, ֆակտորինգային այլ գործառնությունները.

- երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրումը, ակրեդիտիվների բացումը.

- բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կողմից արժեթղթերի օտարումը, ի պահ ընդունումը և հաշվառումը. <sup>\*7)</sup>

- մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկումը, զեղչումը, փոխանցումը, զիջումը կամ սպասարկումը, ինչպես նաև այլ անձանց կողմից մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի օտարումը. <sup>\*7)</sup>

- բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արտարժույթի (թղթատրամի և մետաղատրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակով օգտագործվող մետաղատրամների և բանկային տոմսերի) օտարումը և (կամ) փոխանակումը հայկական դրամի հետ, բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը սույն օրենքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման. <sup>\*10), \*26)</sup>

- կանխիկի տրամադրման ծառայությունները.

8-րդ պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել <sup>\*12), \*26)</sup>

- արժեթղթերի հավատարմագրային կառավարումը. <sup>\*7)</sup>

- բանկային ոսկու վաճառքը, դրանով արտահայտված հաշիվների բացումն ու վարումը, դրանով այլ գործառնությունների կատարումը, ինչպես նաև բանկերին և վարկային կազմակերպություններին բանկային ծուլակտորների իրացումը <sup>\*20), \*7), \*13)</sup>.

- (հանվել է). <sup>\*2)</sup>

12-րդ պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել <sup>\*26)</sup>

- (հանվել է). <sup>\*2)</sup>

- օրենքով սահմանված կարգով բանկի, վարկային կազմակերպության և պետության ստեղծած հիմնադրամի <sup>\*12), \*27)</sup> սեփականություն դարձած անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի իրացումը. <sup>\*2)</sup> Սույն պարբերության կիրառության իմաստով՝ գրավի առարկան մինչև բանկի կամ վարկային կազմակերպության կամ պետության ստեղծած հիմնադրամի <sup>\*27)</sup> սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված է, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը. <sup>\*26)</sup>

- գումարների (հասույթների, պարտադիր, կոմունալ և այլ վճարների) ընդունման ինչպես նաև աշխատավարձի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունները կնքված պայմանագրերի համաձայն.

- բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներմուծված այն ապրանքների ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) տրամադրումը, որոնց ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկը օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվել և

չի գանձվել.

- բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը՝<sup>35)</sup> լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին:<sup>12), 26)</sup>

ԱԱՀ-ից չեն ազատվում սույն կետով նախատեսված ծառայությունների հետ կապված քաղվածքների և այլ տեղեկությունների ձևակերպումը և տրամադրումը, արժեթղթերի, չեկերի, վճարագրերի, վճարային փաստաթղթերի քարտերի, թղթադրամի, մետաղադրամի, բանկային ոսկու պատրաստումը, ֆաբրիկային ծառայությունները.

18/ (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>2)</sup>

19/ դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում՝ կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը<sup>35) 2)</sup>.

20/ (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>2), 3)</sup>

21/ միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային կամ շնորհային ծրագրերի նախապատրաստման միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը<sup>35)</sup> և ծառայությունների մատուցումը Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության սահմանած կարգով<sup>2)</sup>.

22/ հասարակական (այդ թվում՝ բարեգործական) և կրոնական կազմակերպությունների կողմից անհատույց սպառումը.<sup>2)</sup>

23/ (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>3)</sup>

24) արտադրողի կողմից Արցախի Հանրապետությունում արտադրված ԱՏԳ ԱԱ 1905 ծածկագրին դասվող հացի և լավաշի օտարումը.<sup>1), 10), 26), 34)</sup>

25/ Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի իրացումը.<sup>2)</sup>

26/ (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>2), 10)</sup>

27) թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների (ԱՏԳ ԱԱ ծածկագիր – 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115) իրացումը:<sup>3)</sup>

28) (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>6), 26), 27)</sup>

29) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Արցախի<sup>26)</sup> Հանրապետության հասարակական (ներառյալ՝ բարեգործական), կրոնական և սնանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը<sup>35)</sup> և ծառայությունների մատուցումը մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև սնան ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը<sup>35)</sup> և ծառայությունների մատուցումը Արցախի<sup>26)</sup> Հանրապետությունում ԱԱՀ վճարողների կողմից:

Արցախի<sup>26)</sup> Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում Արցախի<sup>26)</sup> Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև սույն հոդվածի դրույթների համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup> և ծառայությունների շրջանակները որոշում է Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:<sup>8)</sup>

30) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքեր, անհատական բնակելի տներ, ապաստարաններ և (կամ) թաքստոցներ կառուցապատող և (կամ) սեփականատեր և (կամ) կառուցապատողի և (կամ) սեփականատիրոջ հետ կնքված նախագծային աշխատանքների և (կամ) շինարարական կապալի պայմանագրերով կապալառու հանդիսացող անձի կողմից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը Արցախի Հանրապետության տարածքում բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքերի, անհատական բնակելի տների, ապաստարանների և թաքստոցների նախագծային փաստաթղթերի մշակումը, կառուցումը և (կամ) օտարումը:<sup>15), 22), 24), 26), 30), 31)</sup>

31) անմիջական արտադրողի կողմից Արցախի<sup>26)</sup> Հանրապետությունում արտադրված ձեռագործ գորգերի (ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի 570110, ԱՏԳ ԱԱ-ի 570210) իրացումը:<sup>18)</sup>

32) (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>19), 26)</sup>

33) մինչև 2026 թվականի<sup>23), 26), 30)</sup> հունվարի 1-ը<sup>27)</sup> ոռոգման ջրի մատակարարման գործարքները:<sup>20)</sup>

34) մինչև 2026 թվականի<sup>30)</sup> հունվարի 1-ը գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքները՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկի.<sup>23), 26)</sup>

35) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անասնաշենքերի օտարումը:<sup>21)</sup>

36) փաստաբանական ծառայությունների մատուցումը.<sup>25)</sup>

37) տարա արտադրող չհանդիսացող և տարա ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից տարայի օտարումը.

38) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության<sup>35)</sup> «դ» ենթակետում չնշված գույքի ներդրումը: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության<sup>35)</sup> «դ» ենթակետում նշված գույքի ներդրումն ազատվում է ԱԱՀ-ից, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնետնայնը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը չի օտարվել այլ անձի.<sup>26)</sup>

39) արտադրողի կողմից Արցախի Հանրապետությունում արտադրված ռազմական նշանակության արտադրանքի իրացումը: Սույն կետով սահմանված արտոնության կիրառության շրջանակը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը.

40) պետության ստեղծած հիմնադրամի կողմից հողամասի կամ այլ անշարժ գույքի օտարումը.<sup>28)</sup>

41) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը.

42) մինչև 2024<sup>35)</sup> թվականի հունվարի 1-ը ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը.<sup>29)</sup>

43) «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը<sup>35)</sup> և (կամ) ծառայությունների մատուցումը՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:<sup>32)</sup>

**Հոդված 16.** ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը՝ սույն հոդվածում նշված գործարքների իրացման շրջանառության (հոդվածում՝ այսուհետ հարկվող շրջանառություն) նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումն է:<sup>3)</sup>

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափը կիրառվում է՝

1/ Արցախի<sup>26)</sup> Հանրապետության մաքսային սահմանից դուրս «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ընթացակարգով<sup>35)</sup> արտահանվող<sup>2)</sup> ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ<sup>35)</sup>:

Օտարերկրյա անձանց կողմից հանրապետությունում ձեռք բերված ապրանքներն արտահանելիս դրանց համար հանրապետության տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները վերադարձվում են նրանց Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով.<sup>2)</sup>

1.1/ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված գործարքների հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, բեռնաթափման, ուղեկցման և համանման այլ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման նկատմամբ.

1.2/ բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման՝ միջազգային տրանսպորտային ծառայությունների մատուցման նկատմամբ: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա) բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայությունը համարվում է միջազգային, եթե այն սկսվում է Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) և ավարտվում է Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) տարածքից դուրս, կամ եթե այն սկսվում է Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) տարածքից դուրս և ավարտվում է Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) տարածքում,

բ) տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ իրավաբանական անձանց և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը.<sup>35)</sup>

2/ միջազգային երթուղիներով մեկնող կամ ժամանող ուղևորներին անմաքս առևտրի խանութից ապրանքների մանրածախ վաճառքի, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից անմաքս առևտրի խանութի կազմակերպչին անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ.<sup>35)</sup> <sup>26)</sup>

3/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>2)</sup>

4/ (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>3)</sup>

5/ միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի՝

ա) լիցքավորման համար անհրաժեշտ վառելանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ,

բ) սպասարկման (ներառյալ անբուժանելի վնասվածքներ, թռիչք-վայրէջքի), նորոգման, վերասարքավորման, միջազգային երթուղիներով փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, բեռների և փոստի սպասարկման աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման, փոխադրման ընթացքում ուղևորներին ծառայությունների մատուցման նկատմամբ.

6/ այն միջնորդական ծառայությունների մատուցման նկատմամբ, որոնք անմիջականորեն կապված են և ապահովում են սույն հոդվածի 5-րդ կետում նշված ծառայությունների մատուցումը.<sup>35)</sup>  
<sup>2)</sup> <sup>3)</sup>

7/ «ժամանակավոր ներմուծում վերանշակման համար» մաքսային ընթացակարգով<sup>35)</sup> ներմուծված՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով<sup>35)</sup> արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, ինչպես նաև<sup>19)</sup> Արցախի<sup>26)</sup> Հանրապետության տարածքում այն արտադրանքի մշակման կամ հավաքման, շարժական գույքի նորոգման, արդիականացման և համանման այլ ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնք արտահանվում են Արցախի<sup>26)</sup> Հանրապետության մաքսային սահմանից դուրս Արցախի<sup>26)</sup> Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում.

8/ այն աշխատանքների և (կամ)<sup>35)</sup> ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց կատարման և (կամ)<sup>35)</sup> մատուցման վայրը, համաձայն սույն օրենքի, չի գտնվում Արցախի<sup>26)</sup> Հանրապետության ներքին տարածքում.

9/ (ուժը կորցրած է ճանաչվել)<sup>2)</sup>

10/ (հանվել է)<sup>2)</sup>

11/ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով ներմուծվող կամ հանրապետության տարածքում ձեռք բերվող ապրանքների, նրանց համար կատարվող և (կամ)<sup>35)</sup> նրանց մատուցվող ծառայությունների նկատմամբ.

12/ հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ:

Ձրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների<sup>35)</sup> գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

**Հոդված 17.** Առանձին օրենքներով կարող են սահմանվել ԱԱՀ-ից ազատման և Արցախի<sup>26)</sup> Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված այլ արտոնություններ:

## ԲԱԺԻՆ VI

### ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

#### Ենթաբաժին I. Հաշվարկային փաստաթղթերի լրացման կարգը

**Հոդված 18.** Սույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարողները ԱԱՀ-ով հարկվող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման դեպքում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ: Հարկային հաշիվ է համարվում սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով լրացված և դուրս գրված հաշվարկային էլեկտրոնային փաստաթուղթ: Հարկային հաշիվը էլեկտրոնային փաստաթուղթ է և պաշտպանված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Մանրաձախ առևտրի, բնակչության համար աշխատանքների կատարման և (կամ) բնակչությանը ծառայությունների մատուցման գործարքների մասով հարկային հաշիվների դուրսգրման հատուկ ծրագրեր (բիլինգային համակարգեր) կիրառող ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կարող է հարկային հաշիվ դուրս չգրել, եթե ապրանքի գնորդը, աշխատանքն ընդունողը և (կամ) ծառայությունն ստացողը չի պահանջում դուրս գրել հարկային հաշիվ:

Հարկային հաշիվները դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով, բացառությամբ՝

1) այն հարկային հաշիվների, որոնցում պարունակվում է գաղտնիք համարվող և (կամ) սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն.

2) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, երբ հարկային հաշիվները կարող են դուրս գրվել Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հարկային հաշիվները դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) պահին, բացառությամբ սույն հոդվածի յոթերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով ապրանքներ մատակարարող կամ աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող՝ հանձնակատար կամ գործակալ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝ համապատասխանաբար հանձնարարողի կամ պրինցիպալի անունից կարող են դուրս գրել հարկային հաշիվներ կամ ճշգրտող հարկային հաշիվներ, եթե հանձնակատարին կամ գործակալին տրվել է այդպիսի հարկային հաշիվներ դուրս գրելու լիազորագիր: Սույն պարբերությամբ սահմանված դեպքերում հանձնակատարի կամ գործակալի կողմից դուրս գրվող հարկային հաշիվներում, բացի նրանց տվյալներից, լրացվում է նաև հանձնարարողին կամ պրինցիպալին վերաբերող՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի առաջին պարբերությամբ նշված տեղեկատվությունը:

Այն դեպքում, երբ սահմանված կարգով Արցախի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Արցախի Հանրապետությունում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը, սույն օրենքի համաձայն, կրում է գործարքի կողմ համարվող՝ Արցախի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը, ապա այդ գործարքի մասով հարկային հաշիվը, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում Արցախի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից:

Գործունեության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված՝

1) հարկային հաշիվները կարող են դուրս գրվել նախօրոք՝ պայմանով, որ այդ հարկային հաշվում նշված ապրանքները պետք է մատակարարվեն հարկային հաշվում նշված՝ ապրանքների մատակարարման օրը, կամ աշխատանքները պետք է կատարվեն, կամ կատարումն ավարտվի հարկային հաշվում նշված՝ աշխատանքների կատարման կամ կատարումն ավարտելու օրը, կամ ծառայությունները պետք է մատուցվեն, կամ մատուցումն ավարտվի հարկային հաշվում նշված՝ ծառայությունների մատուցման կամ մատուցումն ավարտելու օրը:

2) հանրային ծառայությունների և կոմունալ ծառայությունների մատուցման գործարքների մասով հարկային հաշիվները կարող են դուրս գրվել հաշվարկային ժամանակահատվածի համար ծառայությունների մատուցումն ավարտելուց հետո:

3) սույն հոդվածի վեցերորդ պարբերությամբ սահմանված դեպքերում հարկային հաշվի դուրսգրումը սույն հոդվածով սահմանված ժամկետում կատարելու անհնարինության դեպքում հարկային հաշիվը դուրս է գրվում մատակարարի կողմից ապրանքի, աշխատանքի կամ ծառայության արժեքի վերաբերյալ ներկայացված հարկային հաշիվը փաստացի ստանալու օրը:

Սույն հոդվածի հինգերորդ և վեցերորդ պարբերություններով սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվները, սույն օրենքի կիրառության իմաստով, հավասարեցվում են ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից դուրս գրված հարկային հաշիվներին:

Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքին վերաբերող հարկային հաշիվն ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության կամ ֆիզիկական անձի նախաձեռնությամբ կարող է չեղարկվել հետևյալ դեպքերում:

1) հարկային հաշիվը դուրս է գրվել այն հարկ վճարողի անունով, որին ապրանք չի մատակարարվել, որի համար աշխատանք չի կատարվել և (կամ) որին ծառայություն չի մատուցվել:

2) հարկային հաշիվը դուրս է գրվել սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ:

3) ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը կամ ծառայությունների մատուցմանը վերաբերող հարկային հաշիվը լրացվել է սխալներով, որոնք կարող են այն դուրս գրողի կամ ստացողի համար իրավական կամ ֆինանսական հետևանքներ առաջացնել (օրինակ՝ տուգանք, ծախսագրման կամ հաշվանցման արգելք):

4) հարկային հաշիվով մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայության ընդհանուր արժեքի հաշվարկմանը մասնակցող որևէ տվյալ (քանակ (ծավալ), գին, ակցիզային հարկ, ԱԱՀ-ի դրույքաչափ կամ ԱԱՀ-ի գումար) լրացվել է սխալ:

Չեղարկված հարկային հաշիվը դրա կողմերի համար սույն օրենքով սահմանված իրավական հետևանքներ, այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ, չի առաջացնում:

Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքն անվավեր է ճանաչվում դատարանի վճռի համաձայն:

Անվավեր ճանաչված գործարքի մասով նախկինում դուրս գրված հարկային հաշիվը, սույն հոդվածի համաձայն, ճանաչվում է անվավեր:

Անվավեր ճանաչված գործարքը դրա կողմերի համար սույն օրենքով սահմանված իրավական հետևանքներ (այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ) չի առաջացնում, բացառությամբ սույն հոդվածի տասնչորսերորդ պարբերությամբ սահմանված դեպքերում գործարքի անվավերության հետևանքների:

Գործարքի անվավերության դեպքում կողմերի համար սույն օրենքով սահմանված իրավական հետևանքներ (այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ) առաջանում են միայն չվերադարձված ապրանքի, չվերադարձված աշխատանքի արդյունքի և (կամ) չվերադարձված ծառայության արդյունքի մասով:

Եթե ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի անվավեր ճանաչման՝ սույն հոդվածի տասնմեկերորդ պարբերությամբ սահմանված հիմքերն առկա չեն, սակայն գործարքի կողմերն այն անվավեր են ճանաչել, ապա գործարքի անվավեր ճանաչումը հաշվի չի առնվում:

Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքը ճշգրտվում է հետևյալ դեպքերում.

1) գործարքի առարկան պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանք է.

2) գործարքի առարկան հանրային կամ կոմունալ ծառայություն է, և գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով նախատեսված է, որ այդ ծառայությունների ծավալը հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո կարող է ճշգրտվել.

3) գործարքի առարկա համարվող ապրանքի քանակը, ծավալը և (կամ) որակական հատկանիշները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, ստուգվում են գնորդի կողմից ապրանքի ընդունման պահին, և պարզվում է, որ դրանցից որևէ մեկը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին, որի հետևանքով ապրանքը (կամ դրա մի մասը) ենթակա է մասնակի ընդունման կամ վերադարձման.

4) գործարքի առարկա համարվող ապրանքները մատակարարվել են ավելի, քան սահմանված է եղել հարկային հաշվով, և գնորդի կողմից ավելի մատակարարված ապրանքներն ընդունվել են.

5) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման այն գործարքների դեպքում, երբ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների ծավալը գործարքի ավարտին ավելի կամ պակաս է սկզբնապես դուրս գրված համապատասխան հարկային հաշվով նախատեսված ծավալից, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա. աշխատանքները կամ ծառայություններն արդեն իսկ (փաստացի) կատարվել կամ մատուցվել են գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հարկային հաշվում նշված պայմաններով.

բ. աշխատանքի կամ ծառայության բովանդակությունն այնպիսին է, որ աշխատանքի կամ ծառայության արդյունքի հետ հանձնումը հնարավոր չէ:

Դուրս գրված այն հարկային հաշվի մասով, որի դուրսգրման օրը ներառող հարկային տարվանից անցել է երեք հարկային տարի, չի կարող դուրս գրվել ճշգրտող հարկային հաշիվ:

Ճշգրտված գործարքը դրա կողմերի համար սույն օրենքով սահմանված իրավական հետևանքներ, այդ թվում՝ իրավունքներ և պարտականություններ, առաջացնում է միայն այն մասով, որը մնում է գործարքի ճշգրտման արդյունքում:

Ճշգրտված գործարքի մասով նախկինում դուրս գրված հարկային հաշիվը շարունակում է համարվել վավեր փաստաթուղթ, սակայն ճշգրտված գործարքի մասով ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների) սույն հոդվածով սահմանված կարգով դուրս է գրում նաև ճշգրտող հարկային հաշիվ: Հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողները գործարքի ճշգրտման արդյունքն արտացոլում են հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող լիազոր մարմնի ընդունած իրավական ակտերի համաձայն ճշգրտման կատարման օրը ներառող ամսվա ընթացքում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի համար դուրս գրվող համապատասխան հարկային հաշվում:

Եթե ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտման՝ սույն հոդվածի տասնվեցերորդ պարբերությամբ սահմանված հիմքերն առկա չեն, սակայն ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կատարել է գործարքի ճշգրտում (դուրս է գրել ճշգրտող հարկային հաշիվ), ապա գործարքի ճշգրտումը հաշվի չի առնվում:

Հարկային հաշիվների դուրսգրման, անվավեր ճանաչման և չեղարկման կարգերը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:<sup>22), 28)</sup>

#### **Հոդված 19.** Հարկային հաշիվներ դուրս չեն գրվում

1/ ԱԱՀ վճարող չհանդիսացող անձանց կողմից, բացառությամբ առևտրի հարկ վճարողների՝



«Առևտրի հարկի մասին»<sup>35)</sup> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանմամբ հարկային հաշիվների դուրսգրման դեպքում<sup>28)</sup>։

2) այն ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup> և ծառայությունների համար, որոնք սույն օրենքով ազատված են ԱԱՀ-ից։

3) սույն օրենքի համաձայն՝ հարկման օբյեկտ չհանդիսացող կամ գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) համար։

Վերը նշված դեպքերում հարկային հաշվի փոխարեն լրացվում (կազմվում) են ընդհանուր կարգով սահմանված այլ հաշվարկային (այդ թվում՝ բեռնառաքման) և վճարային փաստաթղթեր։

Եթե ԱԱՀ վճարողը միաժամանակ իրականացնում է սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված որևէ գործարք և այնպիսի գործարք, որի մասով պետք է դուրս գրվի հարկային հաշիվ, ապա կարող է հարկային հաշվում ներառել նաև սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքները։<sup>28)</sup>

**Հոդված 19.1.** ԱԱՀ վճարողները էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնում են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների, աշխատանք կատարողների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվները։

Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքում սույն օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերությամբ սահմանված կարգով հարկային հաշվի դուրսգրումը համարվում է տվյալ հարկային հաշվի՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացում։<sup>28)</sup>

**Հոդված 20.** Հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառվում են՝

1) հարկային հաշվի սերիան ու համարը։

2) հարկային հաշվի դուրսգրման ամսաթիվը։

3) ապրանքի մատակարարման ամսաթիվը, աշխատանքի կատարումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) ամսաթիվը և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) ամսաթիվը։

4) ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը՝ առանձին սյունակով կամ տողով։

5) ակցիզային հարկի գումարը՝ առանձին սյունակով կամ տողով (ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման դեպքում)։

6) բնապահպանական վճարի գումարը՝ առանձին սյունակով կամ տողով (միայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին»<sup>35)</sup> օրենքով սահմանված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնողների և արտադրող-իրացնողների կողմից հարկային հաշիվների դուրսգրման դեպքում)։

7) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի անվանացանկն ու քանակը և (կամ) աշխատանքի, ծառայության տեսակն ու ծավալը։

8) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի միավորի գինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը), ընդհանուր արժեքը և (կամ) աշխատանքի, ծառայության սակագինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը) ու ընդհանուր արժեքը։

9) ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, իսկ ապրանքների մատակարարման դեպքում՝ առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը։

10) ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, իսկ ապրանքների մատակարարման դեպքում՝ ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, ապրանքների նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի, երբ

ապրանքը գնորդին է հանձնվում առաքման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը:

Սույն օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ պարբերությամբ սահմանված դեպքերում Արցախի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության կամ Արցախի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից դուրս գրվող հարկային հաշվում, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև ճշգրտող հարկային հաշվում, որպես ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող հարկ վճարողի հաշվառման համար նշվում է Արցախի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության կամ Արցախի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը:<sup>22), \*3), \*7), \*9), \*12), \*14), \*19), \*22), \*26), \*28)</sup>

**Հոդված 21.** Արցախի<sup>26)</sup> Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ-ի հաշվարկումը և գանձումը հիմնավորվում է մաքսային ձևակերպման ժամանակ լրացվող մաքսային հայտարարագրերով և վճարային փաստաթղթերով (վճարման հանձնարարագիր, անդորրագիր կամ վճարումը հաստատող այլ փաստաթղթեր):

**Հոդված 22.** Հարկային հաշիվներ դուրս գրած անձինք պարտավոր են ժամանակագրական կարգով հաշվառել և առնվազն մինչև դուրսգրման տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալը պահպանել իրենց տված բոլոր հարկային հաշիվները (այդ թվում՝ սահմանված ձևով հաստատված էլեկտրոնային հարկային հաշիվները)<sup>28)</sup>: Անձինք պարտավոր են առնվազն մինչև ստացման տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալը պահպանել ստացած հարկային հաշիվները (այդ թվում՝ սահմանված ձևով հաստատված էլեկտրոնային հարկային հաշիվները)<sup>28)</sup> կամ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը:

Հարկային հաշիվների, դրանց դիմաց վճարումը հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրերի պահպանման ժամկետները չեն կարող պակաս լինել դուրս գրված հարկային հաշվով առաջացած պարտավորության կատարման տարվանը հաջորդող երեք տարուց, ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> և ստացված ծառայությունների մասով հաշվանցումների դեպքում՝ ԱԱՀ-ի գծով պարտավորությունների, հաշվանցումների կամ վերադարձների հաշվին հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի օրենքով սահմանված կարգով մարման ժամկետից:<sup>19)</sup>

## Ենթաբաժին II. ԱԱՀ-ի հաշվարկման կարգը

**Հոդված 23.** Սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝

1) արտադրական և այլ առևտրային նպատակներով Արցախի<sup>26)</sup> Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքներում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների, ընդունված այն աշխատանքների<sup>35)</sup> և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ՝ սույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին<sup>15)</sup> կատարվել է վճարում<sup>30)</sup>:

Ուժը կորցրած է ճանաչվել<sup>26), \*30)</sup>

Ուժը կորցրած է ճանաչվել<sup>\*10), \*30)</sup>

Ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է վճարումը, բացառությամբ սույն կետով սահմանված դեպքի<sup>30)</sup>:<sup>3), \*7)</sup>

ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար սույն օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ԱԱՀ վճարողները 2021 թվականի հունվարի 1-ից հետո կարող են հաշվանցել նաև առանց ապրանք մատակարարողներին, աշխատանք կատարողներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու:<sup>30)</sup>

Ուժը կորցրած է ճանաչվել<sup>\*9), \*19)</sup>

Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> և ստացված ծառայությունների դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումները մասնակիորեն կատարվելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումները կատարվում են վճարմանը համամասնորեն:

Ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> և ստացված ծառայությունների

դիմաց մատակարարին վճարման ենթակա գումարի մի մասը բանկի կամ փոստի միջոցով փոխանցելու, իսկ մյուս մասը կանխիկ դրամով վճարելու կամ այլ կերպ հատուցելու դեպքերում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումներին վերաբերող մասով:<sup>15)</sup>

ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար սույն օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են՝

ա. ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման և (կամ) ծառայությունների ստացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով, եթե համապատասխան գործարքին վերաբերող մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվն ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից սույն օրենքի 19.1-ին հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված կարգով վավերացվել է մինչև ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացման համար սույն օրենքի 33-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ,

բ. համապատասխան գործարքին վերաբերող մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվն ապրանքը ձեռք բերողի, աշխատանքն ընդունողի և (կամ) ծառայությունը ստացողի կողմից սույն օրենքի 19.1-ին հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված կարգով վավերացվելու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով, եթե հարկային հաշիվը չի վավերացվել մինչև ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացման համար սույն օրենքի 33-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ:<sup>30)</sup>

2/ հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար, օրենքով սահմանված կարգով և չափերով, Արցախի<sup>26)</sup> Հանրապետության մաքսային մարմինների կողմից գանձված՝ (գանձման ենթակա) ԱԱՀ-ի գումարների չափով, եթե սույն օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ապրանքների ներմուծման պահին:

3) կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա իրականացված գործարքների մասով սույն օրենքին համապատասխան որոշված հարկվող շրջանառության գումարով կոմիտենտի կամ գործակալի կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ սույն օրենքով սահմանված կարգով:<sup>20)</sup>

Սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող են հաշվանցել ԱԱՀ վճարող դառնալու պահին առկա ապրանքային մնացորդի մասով մատակարարների կողմից տրամադրված հաշվարկային փաստաթղթերում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

Սույն օրենքին համապատասխան ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող համարվելուց դադարելու օրվա դրությամբ առկա կամ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարների) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման և վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին: Արտադրության և շրջանառության ծախսերին վերագրված գումարի մեծության վերաբերյալ հարկ վճարողը ԱԱՀ վճարող չհամարվելու օրվանը, իսկ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի դեբետային մնացորդ առաջանալու դեպքերում դրա առաջացման օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում գրավոր տեղեկացում է հարկային մարմնին: Նշված ժամկետում գրավոր տեղեկացում չստանալու դեպքում ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հարկային մարմնի կողմից հանվում է հաշվառումից և կարող է գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի չափով վերականգնվել, եթե այդ չափը հիմնավորվում է հարկ վճարողի կողմից ներկայացված համապատասխան գրությամբ կամ ստուգման արդյունքներով:

ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հաշվարկելիս հաշվի են առնվում վճարող համարվելուց դադարելու օրվա դրությամբ հարկ վճարողի մոտ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը, այդ ժամանակաշրջանում սույն օրենքով սահմանված դեպքերում ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով պետական բյուջե վճարման կամ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները, ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում կատարված ԱԱՀ-ի վճարումները:<sup>15), 22)</sup>

ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական և այլ առևտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին (օրենքով սահմանված դեպքում՝ մաքսային սահմանին) վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման (ենթակա են վերաձևակերպման), եթե այդ կորուստները շահութահարկով հարկման նպատակով չեն դիտվում որպես համախառն եկամտից նվազեցում:<sup>2), 3)</sup>

Սույն օրենքով սահմանված կարգով հաշվանցումներ կատարում են նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ սույն օրենքի համաձայն ապրանքների մատակարարում համարվող գործարքների մասով պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկելիս:

Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր հանդիսացող (այսուհետ հողվածում՝ կառուցապատող)՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների, անհատական բնակելի տների օտարման դեպքերում սույն օրենքի համաձայն ապրանքների մատակարարում համարվող գործարքների մասով տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցվող գումարները որոշվում են կառուցապատված տարածքի ընդհանուր մակերեսում օտարվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռից ելնելով:<sup>\*22)</sup>

**Հոդված 24.** (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2)</sup>

**Հոդված 24<sup>1</sup>.** (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*3), \*5), \*7), \*10), \*11), \*12), \*14), \*15), \*22)</sup>

**Հոդված 24<sup>2</sup>.** (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*10), \*35)</sup>

**Հոդված 24<sup>3</sup>.** (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*25), \*26), \*30)</sup>

**Հոդված 25.** Հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 23-րդ հոդվածով<sup>\*22)</sup> սահմանված կարգով հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների առաջացող տարբերությունը (գերազանցող գումարը), բացառությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված գործարքների գծով նույն մասով սահմանված կարգով որոշվող գումարների, հաշվանցվում է վճարողների կողմից հետագա հաշվետու ժամանակաշրջաններում Արցախի<sup>\*26)</sup> Հանրապետության տարածքում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման<sup>\*35)</sup> կամ ծառայությունների մատուցման համար սույն օրենքի համաձայն վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին:

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գործարքների) վերաբերող ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա կարող են հաշվանցվել<sup>\*33)</sup> հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին, կամ, վերջիններիս բացակայության պայմաններում, վերադարձվել վճարողներին<sup>\*33)</sup>, եթե հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները գերազանցում են հարկ վճարողի կողմից իրականացված գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները (առկա է ԱԱՀ-ի դեբետային մնացորդ): Ընդ որում, անձի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման ենթակա է ԱԱՀ-ի դեբետային մնացորդի այն մասը, որը չի գերազանցում հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20 տոկոսը: 2021 թվականի հունվարի 1-ի<sup>\*33)</sup> դրությամբ ԱԱՀ-ի դեբետային մնացորդում ներառված՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցվում կամ վերադարձվում են ընդհանուր գործարքների հասույթի մեջ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխան, բայց ոչ ավելի, քան ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20 տոկոսը:

Եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ԱԱՀ-ի դեբետային մնացորդը գերազանցում է գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարը, ապա գերազանցող մեծությունը վերագրվում է հետագա հաշվետու ժամանակաշրջաններին՝ սույն հոդվածով սահմանված կարգով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումարը որոշելու համար:

Սույն հոդվածին համապատասխան ԱԱՀ-ի գումարների հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծությունը որոշվում է հարկային հաշվանցումների ուսումնասիրությամբ և (կամ) ստուգմամբ՝ «Հարկերի մասին» օրենքով սահմանված կարգով: ԱԱՀ-ի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի որոշման, ուսումնասիրությունների և ստուգումների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով:<sup>\*26) \*33)</sup>

(ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*10), \*26), \*33)</sup>

(ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*26), \*33)</sup>

Սույն օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկվող շրջանառության նկատմամբ

հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների առաջացող տարբերությունը (գերազանցող գումարը) ենթակա չէ վերադարձման, բացառությամբ՝ այն գումարների, որոնք ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին: Հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների առաջացող տարբերությունը (գերազանցող գումարը) դուրս է գրվում շահույթի (եկամտի) հաշվին: (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*2), \*7), \*33)</sup>

**Հոդված 26.** Սույն օրենքի 23 հոդվածում<sup>\*2)</sup> նշված դեպքերում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները (այդ թվում նաև՝ սույն օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված՝ ներմուծման պահին վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարները)<sup>\*20)</sup> հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն՝

1) ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից.

2) սույն օրենքի 7 հոդվածի համաձայն հարկվող օբյեկտ չհամարվող և 15 հոդվածի համաձայն ԱԱՀ-ից ազատված, այդ թվում՝ արտոնագրային վճարով կամ հաստատագրված վճարով կամ առևտրի հարկով հարկվող<sup>\*22)</sup> գործարքների (գործառնությունների) գծով, ինչպես նաև այն գործարքների գծով, որոնց վրա չի տարածվում սույն օրենքի գործողությունը<sup>\*2)</sup>: Սույն կետում նշված դեպքերում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները միացվում են ապրանքները ձեռք բերելու գնին<sup>\*20)</sup>, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքերի<sup>\*2)</sup>:

2-րդ պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել <sup>\*2), \*3), \*22), \*26)</sup>

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված<sup>\*19)</sup> սովյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերվող ձեռքբերումների, բացառությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի (այսուհետ սույն մասում՝ գույք)<sup>\*20)</sup> մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների, աշխատանքների<sup>\*35)</sup> կամ ծառայությունների ձեռք բերման գնին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին: Սույն մասի դրույթները գործում են այն ձեռքբերումների նկատմամբ, որոնք կատարվել են 2001 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:<sup>\*3)</sup> Սույն կետին համապատասխան վերաձևակերպումներ չեն կատարվում այն դեպքերում, երբ գործարքները իրականացվում են այն անձի կողմից, որը դադարել է համարվել ԱԱՀ վճարող:<sup>\*22)</sup>

Եթե գույքի ձեռքբերումը, ներմուծումը կամ կառուցումը (այսուհետ՝ սույն հոդվածի կիրառման իմաստով՝ ձեռքբերումներ) ի սկզբանե ուղղակիորեն վերագրվում է ԱԱՀ-ով հարկվող գործարքներին կամ ի սկզբանե հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել ԱԱՀ-ով հարկվող կամ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված գործարքներին (այսուհետ՝ սույն հոդվածի կիրառման իմաստով ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ), ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է այդ ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում:

Եթե գույքը, որի ձեռքբերման կամ ներմուծման կամ կառուցման մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի հաշվանցում, հետագա հաշվետու ժամանակաշրջաններում ամբողջությամբ կամ մասնակիորեն օգտագործվում է ԱԱՀ-ով չհարկվող գործարքների իրականացման համար, ապա՝

ա. հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա գումարներից պակասեցման՝ սովյալ հաշվետու ժամանակաշրջանի համար «Շահութահարկի մասին»<sup>\*35)</sup> օրենքով սահմանված նորմաներով գույքի համար հաշվարկվող ամորտիզացիայի գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով.

բ. սույն պարբերության «ա» ենթակետով սահմանված կարգով որոշվող պակասեցվող գումարը նվազեցվում է հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի գումարի) ԱԱՀ-ով հարկվող գործարքների շրջանառության (առանց ԱԱՀ-ի) տեսակարար կշիռն համապատասխանող գործակցով, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սովյալ գույքը միաժամանակ օգտագործվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների իրականացման համար.

գ. հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա գումարներից պակասեցման, սովյալ գույքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում գույքի օտարումն ինքնին ԱԱՀ-ով չհարկվող գործարք է:

Եթե գույքի ձեռքբերումը ի սկզբանե ուղղակիորեն վերագրվում է ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները հաշվանցման ենթակա չեն այդ ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջաններում:

Եթե գույքը, որի ձեռքբերման մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի հաշվանցվող գումարների պակասեցում (ԱԱՀ-ի գումարները սահմանված կարգով միացվել են գույքի ձեռքբերման արժեքին) հետագա հաշվետու ժամանակաշրջաններում

ամբողջությամբ կամ մասնակիորեն օգտագործվում է ԱԱՀ-ով հարկվող գործարքների իրականացման համար, ապա՝

ա. հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա գումարներն ավելացվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար «Շահութահարկի մասին»<sup>35)</sup> օրենքով սահմանված նորմաներով գույքի համար հաշվարկվող ամորտիզացիայի գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով.

բ. սույն պարբերության «ա» ենթակետով սահմանված կարգով որոշվող ավելացվող գումարը նվազեցվում է հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի գումարի) ԱԱՀ-ով չհարկվող գործարքների շրջանառության (առանց ԱԱՀ-ի) տեսակարար կշիռն համապատասխանող գործակցով, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տվյալ գույքը միաժամանակ օգտագործվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների իրականացման համար.

գ. պակասեցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա գումարներին ավելացման տվյալ գույքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում գույքի օտարումն ինքնին ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

Եթե գույքի ձեռքբերման կամ ներմուծման կամ կառուցման հաշվետու ժամանակաշրջանում գույքը միաժամանակ օգտագործվում է ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների իրականացման համար, ապա տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը պակասեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար «Շահութահարկի մասին»<sup>35)</sup> օրենքով սահմանված նորմաներով գույքի համար հաշվարկվող ամորտիզացիայի գումարի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով՝ նախապես նվազեցված հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի գումարի) ԱԱՀ-ով հարկվող գործարքների շրջանառության (առանց ԱԱՀ-ի) տեսակարար կշիռն համապատասխանող գործակցով:<sup>20)</sup>

ԱԱՀ վճարողների կողմից գույքի լուծարման դեպքում, որի մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում), հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ գույքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով: Սույն պարբերությունում նշված գույքը հետագայում որպես նույն նպատակային նշանակության գույք օտարելու դեպքում սույն պարբերությամբ սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցված ԱԱՀ-ի գումարները կրկին ենթակա են վերաձևակերպման՝ օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ գույքի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:<sup>26)</sup>

3) ոչ արտադրական (ոչ առևտրային) նպատակներով ձեռք բերված և (կամ) օգտագործված<sup>3)</sup> ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup> և ծառայությունների գծով բացառությամբ ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup> ու ծառայությունների անհատույց (մասնակի հատուցմամբ) հատկացման դեպքերի:<sup>2),\*3)</sup>

4) ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և այդ գործարքների մասով ձեռքբերումների (ձեռք բերված (կամ ներմուծված) ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> ու ստացված ծառայությունների) գծով մատակարարների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարների միջև առաջացող բացասական տարբերությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ բացասական տարբերությունն առաջանում է օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կարգավորող մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման արդյունքում:<sup>3),\*12)</sup>

5) ոչ իրացման նպատակով ձեռք բերված (ներմուծված) մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Նշված գումարները ենթակա են վերաձևակերպման և սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվանցման՝ այդ ավտոմեքենաների հետագա իրացման պահին դրանց մնացորդային արժեքի նկատմամբ հաշվարկային եղանակով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի չափով:<sup>7)</sup>

6) եթե հարկային հաշիվն վերաբերող գործարքը, սույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, ձանաչվել է անվավեր:<sup>28)</sup>

**Հոդված 27.** Եթե սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվող անձինք միաժամանակ իրականացնում են ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ (ներառյալ՝ ԱԱՀ-ից ազատված, հարկման օբյեկտ չհամարվող, հաստատագրված վճարներով կամ առևտրի հարկով հարկվող գործարքներ, ինչպես նաև այնպիսի գործարքներ, որոնց վրա չի տարածվում սույն օրենքի գործողությունը), ապա՝

1) հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարից կարող են հաշվանցել (պակասեցնել) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների (ձեռք բերված ապրանքների (բացառությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի), ընդունված աշխատանքների<sup>35)</sup>, ստացված ծառայությունների՝ այսուհետ սույն հոդվածում՝ ձեռքբերումների) հարկային հաշիվներում կամ կրճատ հաշիվ ապրանքագրերում (այսուհետ՝ սույն հոդվածում՝ հարկային հաշիվներում), ապրանքների (բացառությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի) ներմուծման մաքսային հայտարարագրերում (այսուհետ՝ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված և սույն օրենքի այլ հոդվածներին համապատասխան հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումարը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնց հաշվանցումը տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հետաձգվել է սույն օրենքի 23-րդ հոդվածի հիմքով, ենթակա են հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում՝ առանց հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների տեսակարար կշիռը հաշվի առնելու,

2) հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա գումարներից պակասեցվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում, ինչպես նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները,

3) հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին ուղղակիորեն չվերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում, ինչպես նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում կամ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցվում են հետևյալ կարգով՝

ա. մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ<sup>\*30)</sup> ձեռքբերումների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց դիմաց մատակարարներին վճարումները կատարվել են կանխիկ դրամով, ամբողջությամբ պակասեցվում են վճարման հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից,

բ. ձեռքբերումների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ էլեկտրոնային ստորագրությամբ չեն վավերացվել, իսկ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ձեռքբերումների գծով նաև այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց գծով մատակարարներին վճարումներ չեն կատարվել, հետաձգվում են հետագա հաշվետու ժամանակաշրջաններ՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի) հարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխանող չափով,<sup>\*\*28), \*30)</sup>

գ. սույն կետի «բ» ենթակետով սահմանված դեպքում ԱԱՀ-ով չհարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխանող՝ ձեռքբերումների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները պակասեցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից,

դ. սույն կետի «բ» ենթակետով սահմանված կարգով հետաձգված ԱԱՀ-ի գումարներին համապատասխանող գործարքների գծով հետագա հաշվետու ժամանակաշրջանում վճարումները բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին չկատարելու դեպքում այդ գումարները ենթակա չեն հաշվանցման (այդ գումարների գծով հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպումներ չեն կատարվում)։

ե. սույն կետի «բ» ենթակետով սահմանված կարգով հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում՝ առանց հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների տեսակարար կշիռը հաշվի առնելու։

զ. ուղղակիորեն չվերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում, ինչպես նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով օրենքի 20-րդ և 23-րդ հոդվածների համաձայն առկա են հաշվանցումներ կատարելու հիմքերը, հաշվանցվում են հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի) հարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխանող չափով, իսկ չհարկվող գործարքների տեսակարար կշիռով ենթակա են պակասեցման հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից:<sup>\*\*2), \*10), \*22)</sup>

**Հոդված 28.** Եթե սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում իրենց բնակության վայրում սեփական սպառման հետ միաժամանակ և ձեռք բերված ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup>, ծառայությունների համար վճարել (ձևակերպել) են

ԱԱՀ, ապա հաշվանցման (պակասեցման) ենթակա են միայն ԱԱՀ-ի այն գումարները, որոնք վճարվել (ծ-  
լակերպվել) են անմիջականորեն ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով  
ծեռք բերված ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup>, ծառայությունների համար:

**Հոդված 29.** *Սույն օրենքի 19-րդ հոդվածի պահանջները խախտելու և հարկային հաշիվ դուրս գրե-  
լու դեպքում անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը սահմանված  
ընդհանուր կարգով վճարել բյուջե, եթե դուրս գրված հարկային հաշիվը սահմանված կարգով չէրյալ չի  
համարվել<sup>28)</sup>։<sup>2)</sup>*

Սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի  
կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր  
արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում անձինք պարտավոր են<sup>35)</sup> սույն օրենքի 8-րդ հոդվածի  
6-րդ կետով սահմանված կարգով հաշվարկվող՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտին համապատասխանող ԱԱՀ-  
ի գումարի և հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարի<sup>35)</sup> դրական տարբերությունը սույն  
օրենքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե:<sup>28)</sup>

### Ենթաբաժին III. ԱԱՀ-ի վճարման և հաշվարկների ներկայացման կարգը և ժամկետները

**Հոդված 30.** *Արցախի<sup>26)</sup> Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում դրանց համար  
Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ԱԱՀ վճարվում է ներմուծ-  
ման օրվանից տասը օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի<sup>20)</sup>։ Եթե  
նախապես հայտարարված մաքսային ընթացակարգը<sup>35)</sup> (որի համաձայն մաքսային սահմանով բացթող-  
ման ժամանակ ապրանքներից ԱԱՀ չի գանձվում) փոխարինվում է ներքին սպառման<sup>35)</sup> համար բացթող-  
ման (ներմուծման) ընթացակարգով<sup>35)</sup>, ապա վճարողները (կամ մաքսային օրենսդրությամբ սահմանված  
վճարումների համար պատասխանատու այլ անձինք) պարտավոր են ԱԱՀ-ի չգանձված գումարները  
վճարել ներմուծման մաքսային ընթացակարգով<sup>35)</sup> ապրանքների վերահայտարարագրման կամ այդ մա-  
սին հայտնի դառնալու օրվանից հետո տասնօրյա ժամկետում:*

**Հոդված 31.** ԱԱՀ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականաց-  
ման դեպքում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման<sup>35)</sup> և ծառայությունների  
մատուցման, անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային  
պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ տեղի է ունեցել  
ներքոհիշյալ դեպքերից որևէ մեկը<sup>3),\*1)</sup>

1) ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ աշխատանքի կատարման  
արդյունքը փոխանցվել է աշխատանքն ընդունողին<sup>35)</sup> կամ ծառայությունները մատուցվել են պատվիրա-  
տուներին.

2) (հանվել է)<sup>3)</sup>

3) (հանվել է)<sup>3)</sup>

2. անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման հարկվող գործարքների (գործառնությունների)  
իրականացման օրը:<sup>\*1)</sup>

Եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ այդ<sup>35)</sup>  
պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը<sup>35)</sup> լիզինգի առարկայի  
նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա լիզինգի առարկա  
հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում յուրաքանչյուր հաշվետու  
ժամանակաշրջանի վերջին օրը՝ լիզինգի պայմանագրով նախատեսված՝ հաշվեգրված լիզինգային  
վճարներին համապատասխանող չափով:<sup>29)</sup>

Իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում անհատ  
ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող  
երեք տարին լրանալն այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող  
բաժնեմասն օտարվելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության<sup>35)</sup> «դ»  
ենթակետում նշված գույքի ներդրման գործարքի մասով հարկային պարտավորության (ԱԱՀ-ի  
հաշվարկման) ծագման պահ է համարվում բաժնեմասի օտարման պահը:<sup>26)</sup>

**Հոդված 32.** *Սույն օրենքի 23-րդ հոդվածի<sup>35)</sup> \*3),\*22) համաձայն՝ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների  
վճարումները պետական բյուջե կատարվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:*

Սույն օրենքի իմաստով ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչ-  
յուր եռամսյակը՝ բացառությամբ սույն հոդվածի երրորդ մասով սահմանված դեպքի:

Այն անձանց համար, որոնց սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված  
գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60 մլն. դրամը ԱԱՀ-ի վճար-  
ման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:<sup>3)</sup>



Հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:<sup>2)</sup>

Արցախի<sup>26)</sup> Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից իրականացված գործարքի մասով սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու դեպքերում ԱԱՀ-ի գումարները վճարվում են գործարքի իրականացմանը հաջորդող մինչև ամսվա 20-ը ներառյալ:<sup>22)</sup>

**Հոդված 33.** ԱԱՀ վճարողները սույն օրենքի 32 հոդվածով սահմանված ժամկետներում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի,<sup>16)</sup> իրենց գրանցման վայրի հարկային մարմին են ներկայացնում պետական բյուջե ԱԱՀ-ի վճարման համար համապատասխան հաշվարկներ Արցախի<sup>26)</sup> Հանրապետության հարկային մարմնի դեկավարի<sup>35)</sup> կողմից սահմանված ձևով:

«Հարկերի մասին»<sup>35)</sup> օրենքի 20<sup>1)</sup>-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հայտարարագիր ներկայացրած անհատ ձեռնարկատերերը ընթացիկ կիսամյակի համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում Արցախի<sup>26)</sup> Հանրապետության հարկային մարմնի կողմից սահմանված ձևով ԱԱՀ-ի կիսամյակային հաշվարկ (եռամսյակային կտրվածքով)<sup>2)</sup> մինչև այդ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:<sup>16)</sup>

ԱԱՀ վճարողների կողմից ԱԱՀ-ի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշտված հաշվարկներ<sup>28)</sup>, բացառությամբ սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ ճշտված հաշվարկները<sup>28)</sup> վերաբերում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված հաշվետու ժամանակաշրջաններին:<sup>2), 15)</sup>

Սույն հոդվածով սահմանված ժամկետներում ԱԱՀ հաշվարկներ ներկայացնում են նաև ԱԱՀ վճարող չհամարվող անձինք՝ օրենքի համաձայն ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու կամ<sup>28)</sup> ձեռքբերված ապրանքների կամ ընդունված աշխատանքների<sup>35)</sup> կամ ստացված ծառայությունների դիմաց վճարում կատարելու արդյունքում հաշվանցման ենթակա գումար առաջանալու դեպքերում:<sup>22)</sup>

Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտման դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողները (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների) պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքները ԱԱՀ-ի մասով արտացոլել՝

1) համապատասխան ճշգրտող հարկային հաշվի դուրսգրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում նվազում են գործարքից առաջացած հարկային պարտավորության և հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարները:

2) հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում ավելանում են գործարքից առաջացած հարկային պարտավորության և հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարները:

Հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողները պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքներն արտացոլել ճշգրտման կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում:<sup>28)</sup>

## ԲԱԺԻՆ VII

### ԱԱՀ-Ի ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հոդված 34.** Ջրոսաշրջության գործունեության մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ առանց միջազգային ուղևորափոխադրման համար զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից վճարվող գումարի: Օտարերկրյա (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության) զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ձանապարհորդությունները, էքսկուրսիաները իրականացվում են Արցախի<sup>26)</sup> Հանրապետության և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքներում:<sup>25), 10), 18), 22)</sup>

**Հոդված 35.** Մեկից ավելի անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց<sup>27)</sup> ընդհանուր սեփականությունը հանդիսացող գույքի օտարման դեպքում ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մեկ

անգամ՝ անկախ պայմանագրով գույք օտարող կողմում հանդես եկող անձանց թվաքանակից և այդ գույքի նկատմամբ սեփականություն ունեցողների թվաքանակից: ԱԱՀ-ով հարկման (այդ թվում՝ ԱԱՀ-ի շեմի կիրառման) նպատակով գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքի օրենքին համապատասխան որոշվող ԱԱՀ-ով հարկվող շրջանառությանը ավելացվում են նախկինում կատարված գործարքով (գործարքներով) այդ գույքի սեփականության իրավունքում այդ անձի բաժնեմասի օտարման գործարքների ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունները: Ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքից առաջացող ավելացված արժեքի հարկի պարտավորության մասով գույքի սեփականությունում բաժնեմաս ունեցողները կրում են համապարտ պարտավորություն:<sup>22)</sup>

**Հոդված 36.** Ապրանքների աճուրդային վաճառքի դեպքում աճուրդի կազմակերպչի համար հարկվող շրջանառություն է համարվում վաճառվող ապրանքների սեփականատիրոջ (այլ անձի) կողմից միջնորդավճարի (պարգևավճարի, տոկոսի և այլն) գումարը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

**Հոդված 37.** Արցախի<sup>26)</sup> Հանրապետության տարածքում կապի ծառայությունների մատուցման ժամանակ հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը՝ ելնելով սահմանված սակագներից:

Արցախի<sup>26)</sup> Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված էլեկտրակապի օպերատորի կամ փոստային կապի օպերատորի կողմից օտարերկրյա համապատասխան օպերատորներին մատուցվող այն ծառայությունների նկատմամբ, որոնց մասով, համապատասխանաբար՝ էլեկտրակապի միջազգային միության (ԷՄՄ) կանոնադրությանը կամ Համաշխարհային փոստային միության կանոնադրությանը համապատասխան, կատարվում է միջազգային փոխկապակցման ծառայությունների շրջանակներում միմյանց մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարների փոխադարձ հաշվարկ, կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ:<sup>22)</sup>

**Հոդված 38.** Գրավի առարկայի օտարման դեպքերում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է գրավատուն:<sup>20), 22)</sup>

Գրավ դրված գույքը սեփականության իրավունքով գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) կամ պետության ստեղծած հիմնադրամին<sup>27)</sup> անցնելու դեպքում հարկվող շրջանառություն է համարվում գրավ դրված գույքի սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով որոշվող իրացման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը:

Սույն հոդվածի իմաստով վարկային պարտավորություն են համարվում գրավ դրված գույքը բանկին (վարկային կազմակերպությանը) կամ պետության ստեղծած հիմնադրամին<sup>27)</sup> ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը, այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները:<sup>24)</sup>

**Հոդված 39.** (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>3)</sup>

**Հոդված 39<sup>1</sup>.** Սույն օրենքի 15-րդ հոդվածի 29-րդ կետում նշված արտոնության կիրառման առումով մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրեր իրագործողներն այդ մասին նշումներ պետք է կատարեն Արցախի<sup>26)</sup> Հանրապետությունում գտնվող մատակարարների հետ կնքվող պայմանագրերում:

Մատակարարված ապրանքների գծով ստացված հասույթները կամ ստացված (առանց ԱԱՀ-ի) ապրանքները, աշխատանքները<sup>35)</sup> և ծառայությունները կանոնադրական (ծրագրային) նպատակներով չօգտագործելու դեպքում նշված ծրագրի (գործունեության) որակավորումը որպես մարդասիրական օգնության կամ բարեգործականի կարող է փոփոխել կամ կասեցնել Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության սահմանած կարգով, որը բերում է նշված արտոնությունների գործունեության դադարմանը կամ կասեցմանը:

Նախապես բարեգործական կամ մարդասիրական որակված ծրագրի որակումը Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից փոփոխվելու կամ կասեցվելու դեպքում ավելացված արժեքի հարկի նախկինում չվճարված գումարը, ինչպես նաև այն ուշ վճարելու համար սահմանված տույժի գումարը վճարելու պարտավորությունը կրում է՝

ա) որպես բարեգործական կամ մարդասիրական որակումը կորցրած (փոփոխված) ծրագիրն իրականացրած կազմակերպությունն այն մասով, որով իրականացվող ծրագրի շահառու կողմը եղել են ֆիզիկական անձինք կամ կազմակերպություններ, եթե նախատեսված էր, որ ծրագրի շրջանակներում նշված անձինք պետք է ստանային ապրանքներ, աշխատանքներ<sup>35)</sup> կամ ծառայություններ, իսկ ծրագիրն իր որակումը կորցրել է այդ ապրանքները, աշխատանքները<sup>35)</sup> կամ ծառայությունները փաստացի ստացված չլինելու պատճառով:

բ) որպես բարեգործական կամ մարդասիրական որակումը կորցրած (փոփոխված) ծրագրի

շահառուներից յուրաքանչյուրը, եթե վերջիններս կազմակերպություններ են և նախատեսված էր, որ նշված անձինք պետք է ծրագրի շրջանակներում ստացած ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup> կամ ծառայությունների օգտագործման արդյունքում երրորդ անձանց համար կատարեին աշխատանքներ կամ նրանց<sup>35)</sup> մատուցեին ծառայություններ, իսկ ծրագիրն իր որակումը կորցրել է այդ աշխատանքները փաստացի կատարած կամ<sup>35)</sup> ծառայությունները փաստացի մատուցած չլինելու պատճառով:

Նախապես բարեգործական կամ մարդասիրական որակված ծրագրի որակումը Արցախի<sup>26)</sup> Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից փոփոխվելու կամ կասեցվելու դեպքում ավելացված արժեքի հարկի պարտավորությունների մասով «Հարկերի մասին»<sup>35)</sup> օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետի հաշվարկման սկիզբ է համարվում ծրագրով սահմանված դրա գործողության ժամկետի վերջը:<sup>8)</sup>

**Հոդված 40.** Առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև ոչ առևտրային կոոպերատիվների<sup>19)</sup> լուծարման ընթացքում դրանց կողմից սեփականության իրավունքի օբյեկտների և այլ գույքային իրավունքների օտարումը, այդ թվում՝ պետության և երրորդ անձանց հանդեպ պարտավորությունները կատարելուց (մարելուց) հետո բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների միջև բաշխումը (օտարումը) ենթակա է ԱԱՀ-ով հարկման՝ սահմանված ընդհանուր կարգով:

Առևտրային կազմակերպությունների և ոչ արտադրական կոոպերատիվների լուծարման ընթացքում այդ կազմակերպությունների կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ներդրում կատարած ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների կողմից ներդրված համապատասխան գույքի հետ ստացումը՝ ներդրման պահին որոշված արժեքը չգերազանցող չափով, ենթակա է ԱԱՀ-ով հարկման:<sup>20)</sup>

Անհատ ձեռնարկատերերի կողմից գործունեության դադարեցման դեպքում ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների մնացորդների մասով (այդ թվում՝ ապրանքների, արտադրանքի, մտավոր սեփականության օբյեկտների), այլ գույքային իրավունքների գծով ձեռքբերումների դիմաց վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) և մինչև գործունեության դադարեցումը հաշվանցված ԱԱՀ-ի գումարների չափով առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն:<sup>21)</sup>

**Հոդված 40<sup>1</sup>.** Գույքի հավատարմագրային կառավարման արդյունքում հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում այդ գործարքների համար սույն օրենքին համապատասխան որոշվող ընդհանուր շրջանառությունը: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը, իր և կառավարման հիմնադրի փոխարեն, կրում է գույքի հավատարմագրային կառավարիչը: Հավատարմագրային կառավարման արդյունքում իրականացված գործարքների մասով բյուջե վճարման ենթակա է այդ գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կազմում ներառվող՝ այդ գործարքների իրականացման նպատակով ձեռքբերված (ներմուծված) ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված՝ սույն օրենքին համապատասխան հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերությունը:<sup>7)</sup>

## ԲԱԺԻՆ VIII

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԱՄԱՐ

**Հոդված 41.** Սույն օրենքը խախտելու համար ԱԱՀ վճարողները և նրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 42.** Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգի խախտմամբ հարկային հաշիվ կամ ձգարտող հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ կամ ձգարտող հարկային հաշիվ դուրս գրողը վճարում է տուգանք՝ հարկային հաշվի կամ ձգարտող հարկային հաշվի լրիվ արժեքով հատուցման գումարի (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը) չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն ՀՀ դրամից:<sup>28)</sup>

**Հոդված 43.** Հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պակաս ցույց տալու կամ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարն ավել ցույց տալու համապատասխան դեպքերի համար հարկ վճարողից գանձվում կամ առաջադրվում է՝

- 1) պակաս հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը.
- 2) պետական բյուջեից ավել հաշվանցման ենթակա գումարը.
- 3) պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի և հարկ վճարողի ներկայացրած ԱԱՀ-ի

հաշվարկով պետական բյուջեից հաշվանցման ներկայացված գումարի հանրագումարը, եթե հարկ վճարողի կողմից ներկայացվել է բյուջեից հաշվանցման ենթակա գումարով ԱԱՀ-ի հաշվարկ, սակայն ստուգման արդյունքներով առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար:

Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված ԱԱՀ-ի համապատասխան գումարի նկատմամբ հաշվարկվում և զանձվում է տուգանք՝ սույն հոդվածին համապատասխան հաշվարկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա գումարի 20 տոկոսի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արժանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում, նույն տեսակի խախտումը կրկին կատարելու դեպքում տուգանք՝ այդ գումարի 40 տոկոսի չափով:

Սույն հոդվածին համապատասխան հաշվարկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա գումարները և տուգանքները հաշվարկվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:<sup>\*,2),\*70),\*25)</sup>

**Հոդված 43<sup>1</sup>.** Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում (այդ թվում՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո դուրս գրված, սակայն այդ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող) առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) էլեկտրոնային ստորագրությամբ չեն վավերացվել, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չեն և կարող են հաշվանցվել այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով (հաշվարկներով):<sup>\*,2),\*3),\*7),\*10),\*15),\*19),\*28)</sup>

**Հոդված 44.** Եթե ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք սույն օրենքի 3 հոդվածի պահանջներին համապատասխան պարտավոր էին, սակայն չեն վճարել ԱԱՀ իրականացնելով հարկվող գործարքներ (գործառնություններ), ապա դա առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

**Հոդված 44<sup>1\*2)</sup>.** (ուժը կորցրած է ճանաչվել) <sup>\*7)</sup>

**Հոդված 44<sup>2</sup>.** 1-ին մասը ուժը կորցրած է ճանաչվել 14.04.06թ ՀՕ-274 օրենքով:<sup>\*,3),\*12)</sup>

Օրենսդրությամբ սահմանված կարգով առջին և անվավեր ճանաչվող գործարքների, ավելացված արժեքի հարկից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող գործարքների, արտոնագրային վճարով կամ հաստատագրված վճարով<sup>22)</sup> հարկվող գործունեությանը վերաբերող գործարքների գծով, «Առևտրի հարկի մասին»<sup>35)</sup> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտումով<sup>11)</sup> մատակարարների կողմից դուրս գրված կամ անապրանք փաստաթղթում նշված,<sup>9)</sup> հարկային հաշիվներում<sup>12)</sup> առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման: Այդպիսի հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի հաշվանցված գումարները ենթակա են վերաձևակերպման: Ընդ որում, արտոնագրային վճարով կամ հաստատագրված վճարով<sup>22)</sup> հարկվող գործունեությանը, «Առևտրի հարկի մասին»<sup>35)</sup> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմանը<sup>11)</sup> վերաբերող հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցման) այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրանց հաշվանցման անթույլատրելիությունը: Անապրանք փաստաթղթերի օգտագործման միջոցով<sup>12)</sup>, ինչպես նաև ավելացված արժեքի հարկից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող, օրենսդրությամբ սահմանված կարգով առջին և անվավեր ճանաչվող գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման այն հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, որում իրականացվել են այդ գործարքները (կատարվել է հաշվանցում):

Հաշվանցված ԱԱՀ-ի գումարների սույն հոդվածով սահմանված կարգով չձևակերպելը (չպակասեցնելը) դիտվում է որպես օրենքով նախատեսված կարգի խախտումով ապրանքների, աշխատանքների<sup>35)</sup> և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում):<sup>\*7)</sup>

## ԲԱԺԻՆ IX

### ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԻԶ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 45.** Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Արցախի Հանրապետության հարկային մարմինը՝

1) սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-4-րդ կետերի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

2) սույն օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ.

3) սույն օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության հետ.

4) սույն օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության հետ:<sup>26)</sup>

**Հոդված 46.** Եթե Արցախ<sup>26)</sup> Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

**Հոդված 47.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ նրա դրույթները կիրարկվում են 1999 թվականի հունվարի 1-ից:

**Հոդված 48.** Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1997 թվականի մարտի 17-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

23 հունվարի 1999թ.  
ք.Ստեփանակերտ  
ՀՕ-43

**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱՊԱՐԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով սահմանվում են՝

1) Օրենքով սահմանված կարգով անցկացվող՝ հարկային հաշվանցումների ուսումնասիրության կամ ստուգման միջոցով ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գործարքների) գծով (այսուհետ՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով) հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծության որոշման, այդ նպատակով հարկ վճարողի ԱԱՀ-ի դեբետային մնացորդում գերավճարի և չհաշվանցվող մնացորդների գումարների որոշման կարգը, ուսումնասիրությունների և ստուգումների իրականացման առանձնահատկությունները:

2) հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար հարկ վճարողի կողմից հարկային մարմին փաստաթղթերի ներկայացման կարգն ու ժամկետները:

2. Սույն կարգին համապատասխան հաշվանցվում և (կամ) վերադարձվում են նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի գումարները:

3. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով գումարները հաշվանցվում են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց և (կամ), պետական բյուջե հաշվեգրվող հարկային պարտավորությունների բացակայության դեպքում, վերադարձվում կամ հաշվանցվում են հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց կամ հարկ վճարողի ցանկությամբ ուղղվում են հետագա հաշվետու ժամանակաշրջաններում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման<sup>\*35)</sup> կամ ծառայությունների մատուցման գործարքների գծով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների հաշվանցմանը՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու վերաբերյալ դիմում (այսուհետ՝ դիմում) ներկայացնելու դեպքում: Դիմումի ձևը սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

4. Հարկ վճարողի ԱԱՀ-ի դեբետային մնացորդի այն մասը, որն Արցախի Հանրապետության պետական բյուջե սահմանված չափից ավելի վճարված գումար է (գերավճարի մնացորդը), ենթակա է այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման՝ «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով: Ընդ որում, գերավճարի մնացորդի մեծությունը որոշվում է հար-կային պարտավորությունների և հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարման միջոցով:

5. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծությունը որոշելիս որպես ԱԱՀ-ի դեբետային մնացորդ ընդունվում է հարկ վճարողի դիմումի ներկայացման ամսաթվի դրությամբ ԱԱՀ-ի փաստացի դեբետային մնացորդը, առանց գերավճարի մնացորդի և հարկի չհաշվանցվող մնացորդի գումարների: Ընդ որում, հարկի չհաշվանցվող մնացորդ են համարվում այն գումարները, որոնց հաշվանցումը և (կամ) վերադարձն անցկացվող և (կամ) նախկինում անցկացված ուսումնասիրությամբ կամ ստուգմամբ համարվել են չհիմնավորված, ինչպես նաև այն գումարները, որոնց վերաբերող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի ժամկետներն օրենքով սահմանված դեպքերում կասեցվել են:

6. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով գումարները հաշվանցվում են դիմումի հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով անցկացված հարկային հաշվանցումների ուսումնասիրության կամ ստուգման (այսուհետ՝ ուսումնասիրություն կամ ստուգում) արդյունքներով: Հարկային մարմնի կողմից Արցախի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման իրականացման ընթացքում հարկ վճարողի կողմից դիմում ներկայացվելու դեպքում այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են ստուգման արդյունքներով: Հաշվանցումը և (կամ) վերադարձն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

7. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկն իրականացվում է ըստ հաշվետու ժամանակաշրջանների: Ընդ որում՝

1) եթե հարկ վճարողը ներկայացրել է որևէ (մեկ) հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների

դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին դիմում, ապա որպես ԱԱՀ-ի դեբետային մնացորդ ընդունվում է դիմումի ներկայացման օրվա և այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացմանը հաջորդող օրվա դրությամբ, սույն կարգի 5-րդ կետին համապատասխան որոշվող ԱԱՀ-ի դեբետային մնացորդներից նվազագույնը.

2) եթե հարկ վճարողը ներկայացրել է երկու և ավելի հաշվետու ժամանակաշրջաններում իրականացրած՝ ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին դիմում, ապա որպես վերջին հաշվետու ժամանակաշրջանի դեբետային մնացորդ ընդունվում է սույն կետի «ա» ենթակետին համապատասխան որոշվող ԱԱՀ-ի դեբետային մնացորդը, իսկ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների մնացորդ՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացմանը հաջորդող օրվա դրությամբ, սույն կարգի 5-րդ կետին համապատասխան որոշվող ԱԱՀ-ի դեբետային մնացորդը:

8. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա է սույն կարգի 5-րդ կետին համապատասխան որոշվող ԱԱՀ-ի դեբետային մնացորդի այն մասը, որը չի գերազանցում այդ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության 20 տոկոսը:

9. Երկու և ավելի ժամանակաշրջանների համար այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելիս հաշվանցվում և (կամ) վերադարձվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված համապատասխան գումարների հանրագումարը, սակայն ոչ ավելի հարկ վճարողի դիմումի ներկայացման օրվա դրությամբ ԱԱՀ-ի դեբետային մնացորդից: Հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված գումարների հանրագումարը հարկ վճարողի դիմումի ներկայացման օրվա դրությամբ ԱԱՀ-ի դեբետային մնացորդը գերազանցելու դեպքում հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարն ըստ ժամանակաշրջանների բաշխելիս գերազանցող գումարը նվազեցվում է վերջին ժամանակաշրջանի համար հաշվարկված գումարից:

10. Եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ԱԱՀ-ի դեբետային մնացորդը գերազանցում է գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս հաշվարկային դրույթաչափով հաշվարկված գումարը, ապա գերազանցող մեծությունը վերագրվում է հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին: Գերազանցող մեծությունը համարվում է վերագրված հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին, եթե այն հաշվի է առնվում որևէ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների մասով հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշելիս (եթե այդ գումարը ներառված է հարկ վճարողի դիմում ներկայացնելու օրվա դրությամբ ԱԱՀ-ի դեբետային մնացորդում):

11. ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների հարկվող շրջանառությունը որոշվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով: ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող շրջանառությունը հավելագրելու փաստ հայտնաբերելու դեպքերում անցկացվում է ստուգում, և հարկային մարմինն իրավասու է ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող շրջանառությունը հաշվարկել անուղակի եղանակներով՝ «Հարկերի մասին» օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան: ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող շրջանառությունը հավելագրելու հետևանքով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց ավել հաշվանցված և (կամ) ավել վերադարձված գումարը համարվում է հարկ վճարողի կողմից օրենքով սահմանված չափից ավելի հաշվանցված հարկային պարտավորության գումար, որի նկատմամբ ստուգման ակտով հաշվարկվում են օրենքով սահմանված տույժեր և տուգանքներ:

12. Հարկային մարմինը պարտավոր է ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու և (կամ) վերադարձնելու նպատակով կազմել և Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան եզրակացություն, կամ ուսումնասիրության արձանագրության կամ ստուգման ակտի օրինակը հարկ վճարողին տրամադրելու միջոցով տեղեկացնել հաշվանցման կամ վերադարձման իրավունքը լրիվ կամ մասնակիորեն ձանաչելու մասին:

13. Ուսումնասիրության արձանագրության կամ ստուգման ակտում մասնավորապես նշվում են՝

1) որոշման կայացման իրավական հիմքերը (այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել):

2) այն փաստաթղթերն ու փաստերը, որոնք հիմք են ծառայել նման որոշում ընդունելու համար:

14. Ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարները համարվում են չհիմնավորված, եթե չեն պահպանվել օրենքով սահմանված պահանջները: Ընդ որում, այդ գումարները համարվում են չհիմնավորված, եթե՝

1) ԱԱՀ-ի դեբետային մնացորդն առաջացել է ձեռք բերված ապրանքների, ընդունված

աշխատանքների<sup>35)</sup> և ստացված ծառայությունների գծով մատակարարների դուրսգրած այնպիսի հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարներից, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով սահմանված պահանջները չեն բավարարում:

2) ԱԱՀ-ի գումարների հաշվանցում կատարվել է այնպիսի հարկային հաշիվներով, որոնցում արտացոլված ԱԱՀ-ի գումարները, «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 43<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն, ենթակա չեն տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման:

3) ԱԱՀ-ի գումարների հաշվանցում կատարվել է «Հարկերի մասին» օրենքի 32-րդ հոդվածին համապատասխան անապրանք համարվող փաստաթղթերով:

4) ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը կապված է այնպիսի գործարքների հետ, որոնք, Քաղաքացիական օրենսգրքի համաձայն, անվավեր են:

5) ԱԱՀ-ի գումարները հաշվանցվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 23-րդ,<sup>35)</sup> 26-րդ կամ 27-րդ հոդվածներով սահմանված կարգերի խախտմամբ:

6) «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 44<sup>2</sup>-րդ հոդվածում նշված գործարքներին վերաբերող ձեռքբերումների (ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների<sup>35)</sup> կամ ստացված ծառայությունների) մատով մատակարարների դուրս գրած հարկային հաշիվներով կատարվել է հաշվանցում:

7) ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու արդյունքում կատարվել է օրենքով սահմանված չափից ավելի գումարի հաշվանցում:

8) հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերով չի հիմնավորվել ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով դիմումում նշված իրացման շրջանառությունը: Այդ դեպքում որպես ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով իրացման շրջանառություն ընդունվում է հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերով հիմնավորված մասը:

15. Ապրանքների ձեռքբերման, աշխատանքների ընդունման<sup>35)</sup> կամ ծառայությունների ստացման գործարքների մատով ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը չի հիմնավորված համարվելու դեպքերում (սույն կարգի 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերում նշված դեպքերում) այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման համար հարկ վճարողի ներկայացրած գումարը չի հիմնավորված է համարվում միայն այդ գործարքների մատով:

16. Օրենքով և իրավական ակտերով չնախատեսված գումարով հաշվանցում կատարելու դեպքերում (սույն կարգի 14-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված դեպքերում) այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման համար հարկ վճարողի ներկայացրած գումարը չի հիմնավորված է համարվում միայն այդ գումարների մատով:

17. Որևէ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով ԱԱՀ-ի դեբետային մնացորդի և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրականացման փաստը հիմք չէ այլ հարկային պարտավորությունները կատարված համարելու, ինչպես նաև հարկերի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերը չհաշվարկելու համար, եթե հարկ վճարողը սույն կարգին համապատասխան չի ներկայացրել դիմում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի գումարներն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու մասին: Հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների առկայությունն արձանագրվելու (կամ հիմնավորվելու) դեպքում ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար, սույն կարգի 8-րդ կետին համապատասխան հաշվարկված գումարներով, կազմված համապատասխան եզրակացություններով, հաշվանցվում են հարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի այլ հարկային պարտավորությունները: Հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների գծով նախկինում հաշվարկված տույժերը վերահաշվարկվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները և ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացման ամսաթիվը:

18. ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հարկային մարմնի կողմից առանց ուսումնասիրության կամ ստուգման չի կարող ուղղվել այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման:

19. Սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանման գծով առաջացող հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են տվյալ հարկ վճարողի կողմից հետագա հաշվետու ժամանակաշրջաններում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման<sup>35)</sup> կամ ծառայությունների մատուցման համար վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարներից՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

20. Եթե դիմում ներկայացնելու պահին ավարտվել է հերթական հաշվետու ժամանակաշրջանը, ապա ԱԱՀ-ի գումարների վերադարձն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ նոր ծագած պարտավորությունները մարելուց հետո:

21. ԱԱՀ-ի գումարների հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ժամկետի սկիզբ է համարվում հարկ վճարողի դիմում ներկայացնելու ժամկետը՝ դիմումում նշված գումարի այն մատով, որով սույն կարգին համապատասխան չի մերժվել և (կամ) չի



կասեցվել հաշվանցման և (կամ) վերադարձի ժամկետի ընթացքը:

22. Հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը որոշելու նպատակով ուսումնասիրության կամ ստուգման ընթացքում մասնավորապես՝

1) ճշտվում են դիմումի ստացման օրվա դրությամբ հարկ վճարողի հարկային պարտավորությունները՝ համադրելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում արձանագրված և հարկ վճարողի ներկայացրած տեղեկությունները՝ կազմելով փոխադարձ ստուգման ակտ:

2) ճշտվում են հարկ վճարողի մոտ անցկացված նախորդ ուսումնասիրություններով արձանագրված այն գումարները, որոնք համարվել են չհիմնավորված և այն գումարները, որոնք վերաբերող գործարքների մասով ուսումնասիրության ժամկետի ընթացքը կասեցվել է:

3) իրականացվում է օրենքով սահմանված կարգով հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների առաջացող տարբերության (գերազանցող գումարի) ուսումնասիրություն, որի ընթացքում ճշտվում է հարկ վճարողի ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկների արժանահավաստությունը:

23. Ուսումնասիրության ժամանակ մասնավորապես ճշտվում են՝

1) ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը:

2) ձեռքբերումների գծով հարկային հաշիվների համապատասխանությունը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով սահմանված պահանջներին:

3) այնպիսի հարկային հաշիվների առկայությունը, որոնք, «Հարկերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի համաձայն, համարվում են անապրանք և որոնք վերաբերում են «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 4<sup>4</sup>-րդ հոդվածում նշված գործարքներին (գործունեությանը):

24. Ուսումնասիրության արդյունքներով կազմված արձանագրության կամ ստուգման ակտի հիման վրա կազմվում է սահմանված ձևի համապատասխան եզրակացություն այն գումարով, որի հաշվին այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցումը և (կամ) վերադարձը չի մերժվել կամ համարվել է հիմնավորված:

25. Այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումներն իրականացվում են՝ պահպանելով «Հարկերի մասին» օրենքով սահմանված հարկային պարտավորությունների մարման կարգը:

26. Հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը որոշելու նպատակով ուսումնասիրությունն անցկացվում է հարկ վճարողի դիմումի ստացման պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում (ներառյալ ուսումնասիրություն անցկացնելու մասին հարկային մարմնի կողմից որոշում կայացնելու համար նախատեսված ժամկետը): Առանձին դեպքերում Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով սույն կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել ևս 10 աշխատանքային օրով, եթե ուսումնասիրության 15-օրյա ժամկետն անբավարար է ներկայացված փաստաթղթերը պատշաճ կարգով ուսումնասիրելու կամ անհրաժեշտության դեպքում հարկ վճարողի հետ գործարքներ իրականացրած այլ հարկ վճարողների մոտ օրենսդրությամբ սահմանված ուսումնասիրություններ, ստուգումներ կամ այլ գործողություններ կատարելու համար:

27. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման համար սահմանված ժամկետները սույն կարգով և օրենքով սահմանված դեպքերում կարող են կասեցվել:

28. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը հարկային մարմնի կողմից մերժվում է, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում պարզվել է, որ ներկայացվող փաստաթղթերում ներառված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

2) ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքները, Քաղաքացիական օրենսգրքին համապատասխան, առջինն են: Առանձին գործարքներ առջինն հանդիսանալու դեպքում հաշվանցման և (կամ) վերադարձման մասին դիմումը մերժվում է միայն այդ գործարքների մասով:

3) հարկ վճարողի կողմից ներկայացված այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը, սույն կարգի 14-րդ կետի համաձայն, հիմնավորված չէ:

29. Առանձին գործարքների մասով տեղեկություններն իրականությանը չհամապատասխանելու կամ առանձին գործարքներ առջինն հանդիսանալու դեպքերում հարկ վճարողի դիմումը մերժվում է այդ գործարքների մասով, իսկ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարը մասնակիորեն հիմնավորված չլինելու դեպքում՝ չհիմնավորված գումարի մասով:

30. Սույն կարգի 27-րդ և 28-րդ կետերում նշված դեպքերում, եթե անցկացվում է ուսումնասիրություն, ապա հարկային մարմինը պարտավոր է որոշումն ընդունելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան հարկ վճարողի դիմումի ստացման օրվան հաջորդող 21-րդ աշխատանքային օրը, հարկ վճարողին գրավոր տեղեկացնել այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ժամկետը (ուսումնասիրության ժամկետի ընթացքը) կատարելու մասին՝ նշելով նման որոշում կայացնելու հիմքերը: Հարկ վճարողի կողմից նման որոշման կապակցությամբ ներկայացված գրավոր առարկությունները քննարկվում են դրանց ստացման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում՝ կայացնելով ուսումնասիրությունը շարունակելու, հարկ վճարողի դիմումը բավարարելու կամ առարկությունները մերժելու վերաբերյալ որոշում, որի մասին նշված ժամկետում հարկ վճարողը տեղեկացվում է:

31. ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման նպատակով ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունների բողոքարկումն իրականացվում է «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով:

32. Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը <sup>\*8)</sup>**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 3-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից, *բացառությամբ 1-ին հոդվածի «ա» ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից և «բ» ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի <sup>\*19), \*23), \*26), \*30)</sup> հունվարի 1-ից <sup>\*15)</sup>:*

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը <sup>\*27)</sup>**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 5-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

**Հոդված 5.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետով նախատեսված ավելացված արժեքի հարկի արտոնությունից օգտվող հարկ վճարողները կնքված պայմանագրերի համաձայն շարունակում են օգտվել արտոնությունից մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը <sup>\*30)</sup>**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՒ «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Քաղվածք. սույն օրենքի 6-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

**Հոդված 6.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. ԱԱՀ վճարողները առանց ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների դիմաց վճարում կատարելու ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կարող են կատարել միայն 2021 թվականի հունվարի 1-ից կատարվող ձեռքբերումների, ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների մասով, իսկ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը կատարված ձեռքբերումների, ընդունված աշխատանքների և (կամ) ստացված ծառայությունների մասով ԱԱՀ-ի գծով հաշվանցումները կատարվում են մինչև 2021 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով:

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ն <sup>\*31)</sup>

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 30-րդ կետին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

**Հոդված 2.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքեր, անհատական բնակելի տներ, ապաստարաններ և (կամ) թաքստոցներ կառուցապատող և (կամ) սեփականատեր և (կամ) կառուցապատողի և (կամ) սեփականատիրոջ հետ կնքված նախագծային աշխատանքների և (կամ) շինարարական կապալի պայմանագրերով կապալառու հանդիսացող անձի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը մշակված նախագծային փաստաթղթերի, կառուցված (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքերի, անհատական բնակելի տների, ապաստարանների և (կամ) թաքստոցների՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո օտարունը (հանձնունը) ազատվում է ավելացված արժեքի հարկից, իսկ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը սույն օրենքով ազատվող գործարքներին վերաբերող՝ հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա են Օրենքով սահմանված կարգով վերաձևակերպման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանում:

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ն <sup>\*35)</sup>

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 27-րդ հոդվածը, որը վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ և 15-րդ հոդվածի 42-րդ կետերին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

**Հոդված 27.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի հուլիսի 1-ից ծագող հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների վրա:

\*1) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (31.12.99թ. ՀՕ-86) խմբագրությամբ:

\*2) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (20.06.01թ. ՀՕ-152) խմբագրությամբ:

\*3) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (06.02.02թ. ՀՕ-188) խմբագրությամբ:

\*4) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.04.02թ. ՀՕ-208) խմբագրությամբ:

\*5) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (20.06.02թ. ՀՕ-223) խմբագրությամբ:

\*6) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (27.11.02թ. ՀՕ-19) խմբագրությամբ:

\*7) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.02.03թ. ՀՕ-31) խմբագրությամբ:

\*8) «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (17.12.03թ. ՀՕ-88) խմբագրությամբ:

